

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

« ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ »

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՄԻՆԶԵՎ 2026
ԹՎԱԿԱՆԸ ԿԱՌՈՒՅՎՈՂ, ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՂ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՎՈՂ
300 ԴՊՐՈՑՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ
ԳԵՂԱԴԻՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(Լրամշակված)

Կատարող՝

«Թրիգգեր» ՍՊԸ տնօրեն



Ա. Պեպանյան

ԵՐԵՎԱՆ – 2025թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	4
1.2 Հապավումներ.....	4
1.3 Բացատրագիր.....	4
1.4 Հաշվետվության կազմման իրավական հիմքերը	5
1.5 Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացը	10
1.6 Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը և նպատակը.....	11
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	13
2.1 Երկրաձևաբանական տիպերը և ռելիեֆը	14
2.2. Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը	16
2.3 Կլիման	17
2.4 Մթնոլորտային օդ	20
2.5 Ջրային ռեսուրսներ	20
2.6 Հողային ծածկույթ	21
2.7 Բուսական և կենդանական աշխարհ	23
2.8 Բնության հատուկ պահպանվող տարածքներ.....	25
2.9 Պատմամշակութային հուշարձանների ցանկը.....	30
2.10 Մոցիալ- տնտեսական բնութագիրը	30
3. ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ.....	33
3.1 Ճարտարապետական մաս.....	35
3.2 Կոնստրուկտորական մաս.....	36
3.3 Արտաքին ջրամատակարարում և ջրահեռացում	46
3.4 Ոռոգման ցանց.....	48
3.5 Սառը, տաք ջրամատակարարման, ջրահեռացման և տանիքի անձրևաջրերի հեռացման ցանցեր.....	48
3.6 Էլեկտրատեխնիկական մաս.....	49
3.7 Հրդեհային ազդարարում	51
3.8 Տեսահսկման համակարգ	52
3.9 Արևային ֆոտովոլտային համակարգ	53
3.10 Ջեռուցում, օդափոխություն մաս	57
3.11 Ջերմամեխանիկական մաս.....	58

3.12 Տրանսֆորմատորային ենթակայան	60
3.13 Շինարարության կազմակերպում	62
3.14 Հողային աշխատանքներ	64
3.15 Աղբի հեռացում	65
3.16 Բարեկարգում և Կանաչապատում	66
3.17 Շինարարության իրականացման ժամանակացույցը	66
3.18 Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր	66
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՌԻՍԿԵՐԸ	70
4.1 Ռիսկերի գնահատում	70
4.2 Օդային ավազան	70
4.3 Աղմուկ և թրթռում	73
4.4 Ջրային ռեսուրսներ	75
4.5 Հողային ռեսուրսներ	77
4.6 Բուսական և կենդանական աշխարհ	78
4.7 Պատմամշակութային և բնության հուշարձաններ	78
4.8 Թափոններ	79
4.9 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը	80
4.10 Մարդու առողջություն, աշխատանքի անվտանգություն	81
4.11 Բարեկարգում և Կանաչապատում	82
5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	83
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	96
Հավելված 1. Գլխավոր հատակագիծ	97
Հավելված 2. Տեղագրական հանույթ	98
Հավելված 3. Հատված կադաստրային քարտեզից	99
Հավելված 4. Հողամասի հատակագիծ	100
Հավելված 5. Էլեկտրամատակարարման տեխնիկական պայման	101
Հավելված 6. Հանրային քննարկման հայտարարություն, արձանագրություն, մասնակիցների ցանկ, նկարներ, համայնքի ավագանու՝ գործունեությանը նախնական համաձայնություն տալու մասին որոշման պատճեն	102

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագիր	ՀՀ Կոտայքի մարզի Գեղադիր բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող 288 տեղ/հզորությամբ միջնակարգ դպրոցի կառուցում
Ծրագրի պատվիրատու	Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ (ՀՏԶՀ)
Նախագծային կազմակերպություն	«ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ, հեռ.՝ +374 98127677 Էլ. հասցե՝ capital.project@hotmail.com
ՇՄԱԳ Հաշվետվություն կազմող	«Թրիգգեր» ՍՊԸ, հեռ.՝ +374 94 40 47 34 Էլ. հասցե՝ triggermonitoring@gmail.com
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	Կոտայքի մարզ, Գառնի համայնք, Գեղադիր բնակավայր, 5-րդ փողոց, 26 հողամաս
Կառուցապատվող տարածքի մակերեսը	1.5215 հա
Կառուցապատման մակերեսը	2692.3 քմ
Դպրոցի նախագծային հզորությունը	288 աշակերտ

1.2 Հապավումներ

ԲՀՊՏ	Բնության հատուկ պահպանվող տարածք
ԲԿՊ	Բնապահպանական կառավարման պլան
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ՇՆ	Հայաստանի Հանրապետության Շինարարական Նորմեր
ԿԳՄՍ	Կրթության գիտության մշակույթի և սպորտի
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Բացատրագիր

ՀՀ Կոտայքի մարզի Գեղադիր բնակավայրում նախագծվող միջնակարգ դպրոցի կառուցումն իրականացվելու է Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) պատվերով:

Ենթածրագիրը իրականացվում է «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի Ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր): Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության «Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է անհատական, հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը և երկրի կայուն զարգացմանը:

Համաձայն ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի (21 հունիս, 2014թ.) /խմբագրված 2023թ/ Հոդված 12, կետ 8-ի քաղաքաշինության բնագավառում «... քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով» քաղաքաշինության ոլորտի նախագծերը ըստ շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանի դասվում են «Բ» կատեգորիայի, որի համար պահանջվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության իրականացում:

ՀՀ Կոտայքի մարզի Գեղաղի բնակավայրում նախատեսվող 288 տեղ միջնակարգ դպրոցի կառուցապատման մակերեսը կազմում է 2692.3քմ և համաձայն սույն օրենքի պահանջում է ՇՄԱԳ հաշվետվության մշակում և ներկայացում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պետական փորձաքննության և համապատասխան պետական փորձաքննական եզրակացության ստացում:

1.4 Հաշվետվության կազմման իրավական հիմքերը

1.«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3),

Օրենք՝ – Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության

գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

2.«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

3.«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) - պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

4.«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.) - ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և գենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և

վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

5.«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.) - սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնական միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

6.«ՀՀ Հողային օրենսգիրք» (2001թ.) - սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

7.«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004թ.) - սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

8. «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքը (2011թ.) - կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:

9. «ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002) - նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

10. «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք (2001թ.) - կարգավորում է ՀՀ էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և սահմանում է դրանց կիրառման մեխանիզմները:

11. «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.) - սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

12. «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

13. «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999 թ.) - սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

14. Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006) - սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

15. ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանարապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:

16. ՀՀ կառավարության 29 Հունվարի 2010թ. «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N 72-Ն որոշում:

17. ՀՀ կառավարության 29 հունվարի 2010թ.՝ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N 71-Ն որոշում:

18. ՀՀ կառավարության 31.07.2014թ.՝ ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781-Ն որոշում:

19. ՀՀ կառավարության 08.02.2018թ. «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 108- Ն որոշում:

20. ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011 թվականի 08.09.2011թ. «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N1396-Ն որոշում:

21. ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008թ. «Հայաստանի հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:

22. ՀՀ կառավարության 15 մարտի 2007թ. «ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N 385-Ն որոշում:

23. ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018թ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N 426-Ն որոշում:

1.5 Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացը

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ - 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին /Փոփոխությունները 2023թ/ Օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն:

Գործունեությունները համաձայն Օրենքի դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Հայտում նախատեսված գործունեությունը ենթակա է փորձաքննության՝ համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա

ենթակետի, Քաղաքաշինության բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են. «քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով»:

Նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված: Գնահատման հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

1.6 Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը և նպատակը

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվության մշակումն իրականացվել է ազգային օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին համապատասխան: Գնահատման հաշվետվությունում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախագծվող դպրոցի աշխատանքային նախագիծը,
- նախատեսվող գործունեության տեղանք կատարած այցելությունների ընթացքում հավաքագրված տվյալները և տեղեկատվությունը,
- գտնվելու տեղանքի վերաբերյալ հաշվետվությունները,

վերլուծությունները, քարտեզները,

- ՀՀ օրենսդրության շրջակա միջավայրի օրենսդրական և կարգավորիչ շրջանակը,
- ազդակիր և շահագրգիռ կողմերի հետ քննարկումները:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Դիտարկվող տարածքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի, Գառնի համայնքի, Գեղաղի բնակավայրի, 5-րդ փողոցի, 26 հողամասում: Հողամասի իրավունքի տեսակը՝ սեփականություն, հողի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման: Հողամասի նպատակային նշանակությունը համապատասխանում է նախագծի իրականացման նպատակներին:

Դպրոցի կառուցման համար հատկացված տարածքն իրենից ներկայացնում է կառուցապատված տարածք: Հողամասի մակերեսը կազմում է 1.5215 հա: Համաձայն հողամասի սեփականության վկայականի նախատեսվող գործունեության հողամասի տարածքում առկա է միայն հին դպրոցի շենքը, որի մակերեսը կազմում է 869.85քմ, և որը ենթակա է քանդման: Տարածքում կան թվով 37 հատ ծառեր, որից 23 նախատեսվում է հատել:

Կից գտնվում են՝ ներհամայնքային նշանակության ճանապարհներ, կից տարածքներով անցնող ինժեներական գծեր և հաղորդակցուղիներ, բնակելի տներ:



Նկար 2.1.1 Իրավիճակային քարտեզ

Հայցվող տեղամասի անկյունային կետերի կոորդինատները բերված են ստորև:

Կոորդինատական համակարգը ARM WGS 84

Հ/հ	Y	X	Հեռավորությունը /մ/	Հ/հ	Y	X	Հեռավորությունը /մ/
1	8470585.1032	4446584.2674	28.74	17	8470707.3704	4446570.2943	18.3
2	8470586.1059	4446555.5475	2.98	18	8470689.5704	4446574.3555	24
3	8470586.2196	4446552.5723	22.79	19	8470666.1846	4446579.9428	58.2
4	8470587.3670	4446529.8129	22.32	20	8470684.3124	4446635.2621	2.06
5	8470589.0127	4446507.5516	16.82	21	8470682.2923	4446635.6699	7.52
6	8470590.1332	4446490.7714	23.33	22	8470674.9873	4446637.4603	1.98
7	8470613.3542	4446493.0257	4.01	23	8470675.6670	4446639.3175	1
8	8470617.3587	4446493.1877	34.52	24	8470674.7407	4446639.6919	2.5
9	8470651.5337	4446498.0770	46.24	25	8470672.4220	4446640.6292	13
10	8470697.2995	4446504.7041	3.82	26	8470660.0187	4446644.5232	2.89
11	8470701.0871	4446505.1841	40.01	27	8470658.9106	4446641.8495	26.9
12	8470708.4414	4446544.5083	13.50	28	8470632.8703	4446648.6074	20.1
13	8470710.6689	4446557.8208	5.11	29	8470613.4970	4446653.9543	18.6
14	8470705.5920	4446558.3754	7.74	30	8470606.8646	4446636.5412	12.2
15	8470706.7626	4446566.0285	2.74	31	8470594.7828	4446638.2474	7.11
16	8470707.0228	4446568.7578	1.58	32	8470588.1795	4446635.6004	51.4
17	8470707.3704	4446570.2943		1	8470585.103	4446584.267	

Ուսումնասիրվող տարածքի աշխարհագրական կոորդինատներն են.

40° 9'8.13"N

44°39'19.87"E

Գործունեության տարածքում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքները, պատամամշակութային հուշարձանները:

2.1 Երկրաձևաբանական տիպերը և ռելիեֆը

Երկրաբանական տեսակետից տարածքում տարածված են ստորին միջին օլիգոցենի ապարները (ալևրոլիթներ) կոնգլոմերատիվներով, ավազաքարերով, տուֆա-բրեկչիաներով, որոնք ծածկվում են չորրորդական ժամանակաշրջանի հրաբխային հոսքերով և արտանետումներով՝ նախնական գնահատման

բազալտային ծածկոցներով կամ դրա պիրոկլաստիկ նյութերով: Վերջիններիս տեղ-տեղ ծածկում են ժամանակակից էյուվիալ-դեյուվիալ, դեյուվիալ-կոյուվիալ, իսկ գետահովիտներում և ձորակներում՝ ալյուվիալ-պրոլյուվիալ կուտակումների ոչ կայուն հզորությամբ առաջացումները: Ուսումնասիրվող տարածքներում հիմնական գրունտները ներկայացված են պինդ ավազակավերով, խճային գրունտներով և ժայռային ապարներով:

Շրջանի սեյսմիկ պայմանները Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04-2020թ.-ի, տեղագնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max}=0.4g$ արագացմամբ:



Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են:

2.2. Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Հայաստանի Կոտայքի մարզում՝ Ողջաբերդի լեռների արևմտյան լանջին, Երևան-Գառնի մայրուղու վրա, մարզկենտրոնից 54 կմ հարավ-արևմուտ, որտեղ ռելեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1584.0-1602.0 մետրերի սահմաններում: Տարածքի սահմաններում գեոմորֆոլոգիական տեսակետից տարածաշրջանը բնորոշվող ռելիեֆային հիմնական տարրերն են՝ Կոտայքի հրաբխային սարավանդի լանջերը:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքը ներկայանում է երոզիոն-դենուդացիոն և բազմաթիվ այլ ապարների կոմպլեքսների ծալքավորված ու խիստ ճեղքավորված պայմաններում: Գրունտային ջրերն այստեղ ընդհանուր հորիզոն չեն կազմում, բայց հանդիպում են առանձին ելքեր գետահովիտներում աղբյուրների տեսքով: Դրանք հիմնականում ներկայանում են շերտաճեղքային խորը հորիզոնի գրունտային ջրերի տեսքով: Ուսումնասիրությունների համաձայն գրունտային ջրերը հանդիպում են խորը հորիզոններում: Մեր ուսումնասիրվող տարածաշրջանում մինչև 12մ խորությամբ հորատված հորատանցքերի գրունտային ջրեր չեն հայտնաբերվել ըստ արխիվային տվյալների գտնվում են 30մ-ից խորը հորիզոններում:

Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը

Տարածքի երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է հորատման եղանակով գրունտների լաբորատոր հետազոտությամբ: Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների չորս շերտ: Ստորև բերվում է այդ շերտի լիթոլոգիական նկարագրությունը և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

Շերտ 1 Հողաբուսական շերտ ավազակավի, կավավազի լցոնումով: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (9ա) I կարգ:

Շերտ 2 Ավազակավեր բացից մուգ շագանակագույն, թույլ և միջին խոնավ, պինդ թանձրությամբ, խճի ու խճավազի պարունակությամբ 10-15%: Էյրովիալ-

դելյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (33գ) III կարգ է:

Շերտ 3 Կավ տարբեր երանգների, պինդ թանձրությամբ, փոշենման մասնիկների պարունակությամբ, տեղ-տեղ խճի և մանրախճի պարունակությամբ, մանրամիջահատիկ, հոծ: Էլյուվիալ- պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ III (8գ) կարգ է:

Շերտ 4 Բազալտներ հողմնահարված, բացից մինչև մուգ մոխրագույն, ծակոտկեն և խոռոչավոր, խճաքարային նստվածքների մոտ 10-15% պարունակությամբ, ավազակավի և կավավազի լցոնով 15-20%: Չորրորդական հասակի ապարներ են: Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն (30) VI կարգ է:

2.3 Կլիման

Կլիմայական բնութագրերը բերված են ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀ շինարարական նորմերը» փաստաթղթից՝ տարածքին ամենամոտ գտնվող Գառնի կայանից և ներկայացված են աղյուսակներ 2.3.1.-2.3.3.:

Շրջանը գտնվում է «Ցուրտ կլիմայական» շրջանում: Շրջանն ունի ցուրտ ձմեռով և զով ամառով կլիմա: Ստորև ներկայացվում է շրջանի կլիմայական ցուցանիշները աղյուսակների տեսքով՝

- Տարեկան միջին ջերմաստիճանը 9. 0 °C
- Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 38°C
- Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -30°C
- Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 64%
- Օդի հարաբերական խոնավությունը ամենացուրտ ամսվա 71%
- Օդի հարաբերական խոնավությունը ամենաշոգ ամսվա 39%
- Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 500-700մմ:
- Քամու միջին տարեկան արագությունը 1. 8մ/վ:
- Բնահողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 85սմ

Աղյուսակ 2.3.1. Օդի ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների. °C												Միջին տարեկան. °C	Բացարձակ նվազագույն. °C	Բացարձակ առավելագույն. °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Գառնի	-4.9	-3.2	2.1	8.9	13.8	18.1	22.0	21.5	17.2	10.5	4.2	-2.2	9.0	-30	38

Աղյուսակ 2.3.2. Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանակա ն կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	Ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
Գառնի	76	72	66	61	61	57	53	53	55	63	71	76	64	76	71	53	39

Աղյուսակ 2.3.2. Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը <u>միջին ամսական</u> մմ <u>օրական առավելագույն</u>													Զնաձածկույթ	
	ըստ ամիսների													Տեղումների քանակը նոյեմբեր- մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ- հոկտեմբեր ամիսներին, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան		
Գառնի	35	36	52	66	75	42	20	11	17	40	41	35	470	199	271
	22	28	49	43	40	47	35	37	48	48	32	31	49		

2.4 Մթնոլորտային օդ

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից:

Դիտարկվող տարածքում մշտական դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ անալիտիկ եղանակով: Դրա համար «Էկոմոնիթորինգ»-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-ուղեցույց:

Ըստ ուղեցույցի, մինչև 10, 10-50 և 50-100 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում Գեղադիր բնակավայրը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝

Աղյուսակ 2.4.1

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO ₂)	Ազոտի երկօքսիդ (NO ₂)	Ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

2.5 Ջրային ռեսուրսներ

Գառնիի տարածաշրջանի հիմնական ջրային ռեսուրսը Ազատ գետն է: Ազատ գետը Արաքսի վտակն է: Գետի երկարությունը՝ 55 կմ, ջրահավաք ավազանի մակերեսը՝ մոտ 550 կմ²: Սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայի Սպիտակասար լեռնագագաթի հարավարևմտյան լանջերի 3000-3200 մ բարձրություններից: Սկզբում՝ մոտ 13 կմ հոսում է հարավարևմտյան ուղղությամբ՝ անցնելով մինչև 600 մ խորություն ունեցող գեղատեսիլ հովտով: Գառնի գյուղի մոտ գետը վերջնականապես թեքվում է դեպի հարավ-արևմուտք՝ սկզբնական մոտ 9 կմ անցնելով մինչև 180 մ խորություն ունեցող Գառնու կիրճով:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացնում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը: Մակայն Ազատ գետի վերաբերյալ ՊՈԱԿ տվյալներ չի ներկայացնում:

2.6 Հողային ծածկույթ

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում տարածված են շագանակագույն և կիսաանապատային գորշ հողերը:




Նկար 2.6.1 ՀՀ հողային ծածկույթ

Շագանակագույն հողերի հողաշերտի հզորությունը միջին հաշվով տատանվում է 30-50 սմ-ի սահմաններում, ռելիեֆի իջվածքային մասում հաճախ այն հասնում է 65-70 սմ-ի: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավաավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի պայմաններից և էռոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են, ինչպես

ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր: Հողերի կլանման տարողությունը համամատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավաավազային մեխանիկական կազմով: Շագանակագույն հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1,24գ/սմ³ մինչև 1,48 գ/սմ³, տեսակարար զանգվածը՝ 2,50 գ/սմ³ մինչև 2,65 գ/սմ³, խոնավությունը՝ 20-30% սահմաններում: Այս տիպի հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 10-25%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային մայրատեսակը հարուստ են հողալկալի մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով: Անմշակ հողերում ստրուկտուրան խոշոր-կնձիկային է: Կիսաանապատային գորշ հողերը ձևավորվել են տեղակուտակ, տեղակուտակողոդաբերուկային խճային և խճաբեկորային կարբոնատային մայր տեսակների վրա: Այս հողերն ունեն հիմնականում կավաավազային մեխանիկական կազմ, բավականաչափ կմախքային զանգվածի պարունակությամբ: Ստրուկտուրան փոշեհատիկային կամ վառոդանման է, ջրակայուն ագրեգատների քանակը չի գերազանցում 30-35%-ը: Առանձին տեղերում հողի խորը շերտերում հաճախ բավական քանակությամբ ջրալույծ աղեր են կուտակվում (մինչև 1-ից 1,5 %), որոնք գլխավորապես ներկայացված են CaSO₄, MgSO₄ և այլ աղերի տեսքով:

Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գիահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն: 2024թ. տարեկան տեղեկագրում ներառված է նաև Կոտայքի մարզի Հանքավան համայնքը, սակայն տեղեկագրում Գառնի համայնքի հողային ծածկույթի աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

Սակայն քարտեզից պարզ է դառնում, որ հայցվող տարածքը գտնվում է ծանր մետաղներով թույլ աղտոտված գոտում:



Նկար 2.6.2 ՀՀ-ում ծանր մետաղներով աղտոտված հողատարածքները

Բուն կառուցապատվող տարածքում ըստ ինժեներակրաբանական ուսումնասիրությունների արդյունքների հողաբուսական շերտը ներկայացված է ավազակավի, կավավազի լցոնումով, որի հզորությունը միջինում կազմում է 20սմ:

2.7 Բուսական և կենդանական աշխարհ

Հայաստանի բնակչության բարեկեցությունը մեծապես կախված է կենսաբանական պաշարների առկայությունից, որոնք, ընդերքի պաշարների հետ հավասարապես, երկրի համար հանդիսանում են ռազմավարական ռեսուրսներ:

Կենսաբազմազանությունը կենդանի օրգանիզմների տարատեսակությունն է, որն իր մեջ ներառում է ներտեսակային, միջտեսակային և էկոհամակարգերի բազմազանությունը, այլ կերպ ասած՝ այն բնապահպանական տեսության մեջ

հիմնական հասկացությունն է, հասարակության կենսագործունեության, սոցիալ-տնտեսական զարգացման հիմքը: Ըստ կենսաբազմազանության միջազգային կոնվենցիայի (Convention on Biological Diversity, CBD)՝ կենսաբանական բազմազանություն հասկացության, օրգանիզմների տեսակային բազմազանությունն ու ցանկացած ծագում ունեցող կենդանի օրգանիզմների միջև փոփոխականությունն է՝ նրանց գենային հավաքակազմի և բարդ էկոհամակարգերի հետ միասին, որոնք առաջացնում են կենդանի բնություն: Բնապահպանության հիմնական խնդիրը կենսաբազմազանության պահպանությունն է:

Կենսաբազմազանության պահպանման համար ՀՀ-ում գործում են մի շարք օրենքներ՝ ուղղված բնական միջավայրի պահպանության և օգտագործման կարգավորմանը, ինչպես նաև՝ անհրաժեշտ իրավական հիմքեր ստեղծելուն՝ ընդերքի, ջրերի, մթնոլորտային օդի, բուսական և կենդանական աշխարհի, անտառների պահպանության և օգտագործման հարաբերությունները կարգավորող բնապահպանական օրենսդրության զարգացման համար:

Կառուցապատման տարածքը ենթարկված է անտրոպոգեն ազդեցության, քանի որ ուսումնասիրվող տարածքը հանդիսանում է դպրոցի տարածք, հարակից տարածքները և շրջապատող լանջերը օգտագործվում են գյուղատնտեսական նպատակներով: Այս ամենը հանգեցրել է նրան, որ ուսումնասիրվող և հարակից տարածքներում բնական էկոհամակարգերը ներկայումս խիստ փոփոխված և դեգրադացված են, իսկ բուն ուսումնասիրվող տարածքում բուսականությունը գրեթե բացակայում է: Տարածքը անտառածածկ չէ, չկան նաև արհեստական տնկված անտառներ, պաշտպանիչ անտառաշերտեր: Ուստի կենսաբազմազանության վերաբերյալ տեղեկատվությունը ավելի նպատակահարմար է ներկայացնել տարածաշրջանի կտրվածքով:

Տեղանքը պատված է լեռնատափաստանային բուսականությամբ: Բուսաաշխարհագրական առումով այն պատկանում է Երևանի ֆլորիստիկ շրջանին: Հիմնական բնական համակեցությունը Օշինդր բուրավետով (*Artemisia fragrans*) կազմված լեռնատափաստանն է՝ տրագականտային զազերի տարրերով (Գազ մանրագլխիկ - *Astracantha microcephalus*, Գազ նապաստակապոչ - *Astragalus*

lagurus): Հացահատիկի դաշտերը կազմված են ցորենի (*Triticum aestivum*) և գարու (*Hordeum vulgare*) արտերից: Ներկայումս՝ արտերի միջև գտնվող հատվածներում առկա են դեգրադացված էկոհամակարգեր՝ ինվազիվ ու էքսպանսիվ (Իշակաթնուկ Սեզիերի - *Euphorbia seguieriana*, Խիժաճարճատուկ կնյունանման - *Chondrilla juncea*, Տերեփուկ արևային - *Centaurea solstitialis*, Խոզանափուշ կանաչագլուխ - *Cousinia chlorocephala*) տեսակների մեծ քանակով: Տեղ-տեղ տափաստանային բուսականությունը ընդհատվում է քարացրոնային ազոնալ և երկրորդական բուսականությամբ:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչներիչ տարածաշրջանին բնորոշ են հետևյալ տեսակները՝

Սողուններ՝ *Darevskia raddei* - Ռադդեի ժայռային մողես, *Lacerta agilis* - Ճարպիկ մողես: Թռչուններ՝ *Galerida cristata* - Փութուլավոր արտույտ, *Oenanthe oenanthe* - Սովորական քարաթռչնակ, *Passer domesticus* - Տնային ճնճղուկ: Կաթնասուններ՝ *Microtus arvalis* - Սովորական դաշտամուկ *Vulpes vulpes* - Սովորական աղվես:


Տեղամասի շրջանը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում: Այստեղ չեն արձանագրվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելա- և ապրելավայրեր:

2.8 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Հայաստանի Հանրապետությունում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), որտեղ կենտրոնացած է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ (60-70)%-ը, ներառյալ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:

Դիտարկվող տարածքը չի առնչվում բնապահպանական տեսանկյունից խոցելի կամ բնության հատուկ պահպանվող տարածքների հետ: Կառուցապատման անմիջական հարևանությամբ չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ:

Ստորև ներկայացվում է ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N 1059-Ա որոշման համաձայն ՀՀ-ում բնության հատուկ պահպանվող տարածքների քարտեզ սխեման:



Նկար. 2.8.1. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Ուսումնասիրվող տարածքը անմիջական սահմաններ ԲՀՊՏ-ների հետ չունի: Ամենամոտ ԲՀՊՏ-ն «Խոսրովի անտառ» պետական արգելոցն է, որը տեղակայված է Սրարատի և Կոտայքի մարզերում: Այն ստեղծվել է 1958 թվականին Խորհրդային Հայաստանի կենտրոնական մասի չոր նոսրանտառային, ֆրիգանային և կիսաանապատային լանդշաֆտների, բուսական և կենդանական եզակի համարվող համակեցությունների պահպանության նպատակով:

Արգելոցը տեղակայված է Գեղամա լեռնավահանի և Մերձարքայան ծալքաբեկորավոր լեռնաշղթաների միջև: Արգելոցը տեղակայված է ծովի մակարդակից 700-ից մինչև 2800 մ բարձրության վրա: Արգելոցն ունի հարավարևելյան ձգվածություն, զբաղեցնում է 23,213. 5 հա տարածք և կազմված է Գառնի (4253 հա), Կաքավաբերդ (4745 հա), Խոսրով (6860,8 հա), Խաչաձոր (7354,7 հա) տեղամասերից: Խոսրովի անտառային պետական արգելոցը, իր բազմաթիվ առանձնահատկությունների շնորհիվ, եզակի է ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ Կովկասի էկոհամակարգում:

Արգելոցի տարածքում աճում է բույսերի 1849 տեսակներ: Բույսերից 80 տեսակ գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում: Արգելոցի տարածքում աճող բուսատեսակներից 24 էնդեմիկ են:

Արգելոցում հանդիպում են 283 տեսակ ողնաշարավոր կենդանիներ, որից

- Թռչուններ — 192 տեսակ
- Կաթնասուններ — 44 տեսակ
- Սողուններ — 33 տեսակ
- Ձկներ — 9
- Երկկենցաղներ — 5 տեսակ

Ողնաշարավոր կենդանիներից 58 տեսակ գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում, իսկ 51 տեսակ Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում: Կաթնասուններից արգելոցում հանդիպում է ընձառյուծը, լուսանը, արջը, գայլը, վայրի խոզը, բեզոարյան այծը, նապաստակը, աքիսը, քարակզաքիսը, գորշուկը, հնդկական մացառախոզը և այլ տեսակներ: Արգելոցում սողուններից հանդիպում է կովկասյան գյուրգան, հայկական, լեռնատափաստանային իժը, կովկասյան կատվածը, առաջավորասիական մաքույան, անդրկովկասյան սահնոձը, միջերկրածովյան կրիան, անդրկովկասյան մողեսը և այլ տեսակներ: «Խոսրովի անտառ» պետական արգելոցում անողնաշարավոր կենդանիների ֆաունան ներկայացված է ավելի քան 1500 տեսակներով, որոնցից փափկամարմինները՝ 62 տեսակ, կարիճները՝ 3 և 1427-ը՝ միջատներ:

«Խոսքովի անտառ» պետական արգելոցի տարածքում հաշվառված է ընդհանուր թվով 312 հուշարձան, որից 29-ը՝ վանքեր, եկեղեցիներ, մատուռներ, 19-ը՝ բնակատեղի, 2-ը՝ ամրոց, 222-ը՝ խաչքարեր և տապանաքարեր, 40-ը՝ այլ բնույթի, հիմնականում, միջնադարյան հուշարձաններ, որոնք մեծամասամբ կիսավեր, անբարեկարգ վիճակում են: Արգելոցի տարածքում են գտնվում Հավուց Թառ, Սբ. Ստեփանոս վանական համալիրները, Մանկուկ, Աղասի, Խոսքով, Սպիտակավանք, Գեղմահովիտ, Բերդատակ, Ավանիկ, Վանստան, Գիլան գյուղատեղիները, Կաքավաբերդը, որը հայտնի է նաև Գեղի բերդ անունով, Վահագնի և Աստղիկի ջրվեժները, մի քանի հարյուր խաչքարեր ու մահարձաններ, միջնադարյան կամուրջ և այլ պատմական հուշարձաններ: Խոսքովի անտառում պահպանվել են նաև նախնադարյան ժամանակաշրջանի ժայռապատկերներ, դամբարանադաշտեր և հնագիտական հուշարձաններ:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքին համաձայն բնության հատուկ պահպանվող տարածքներ են համարվում բնության հուշարձաններ: ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967 որոշմամբ:

Աղյուսակ 2.8.1.

«Անանուն» խզվածքներ	<u>ՀՀ Կոտայքի մարզ</u> Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ	Երկրաբանական հուշարձան
Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ	Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ	Երկրաբանական հուշարձան
«Թագավորանիստ» խարամային կոն	Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում	Երկրաբանական հուշարձան
«Պեղիտե փիղ» քարե քանդակ	Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ	Երկրաբանական հուշարձան
«Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ	Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում	Երկրաբանական հուշարձան
«Ծակ քար» բնական թունել	Ջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին	Երկրաբանական հուշարձան
«Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ	Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ագատ գետի կիրճում	Երկրաբանական հուշարձան

«Անանուն» քարայր սյունաձև բազալտներում	Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում	Երկրաբանական հուշարձան
«Անանուն» լանջային էրոզիա	Ազատ գետի աջակողմյան ափերին	Երկրաբանական հուշարձան
«Անանուն» լավային ծալքեր	Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում	Երկրաբանական հուշարձան
«Անանուն» խորշեր	Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ.	Երկրաբանական հուշարձան
«Հատիս» հրաբուխ	Զովաշեն գյուղից 2.0 կմ արմ.	Երկրաբանական հուշարձան
«Ավազան» հրաբխային զմբեր	Կարենիս գյուղից 1.5 կմ հս-արլ.	Երկրաբանական հուշարձան
«Կարենիս» հրաբխային զմբեր	Կարենիս գյուղից 0.5 կմ հս-արլ.	Երկրաբանական հուշարձան
«Անանուն» ապարների բնորոշ մերկացում	Նուռնուս գյուղի և Արգելի ՀԷԿ-ի միջև	Երկրաբանական հուշարձան
«Անանուն» օբսիդիանի ելքեր	Ջրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում	Երկրաբանական հուշարձան
«Անանուն» քարե կուտակումներ	Քաղսի գյուղի հվ-արմ. եզրին, Հրազդանի կիրճում	Երկրաբանական հուշարձան
«Գութանասար» հրաբուխ	Ֆանտան գյուղից 3 կմ հվ.	Երկրաբանական հուշարձան
«Լեռնահովիտ» քարային կուտակումներ	Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեգխարա» գյուղատեղիի մոտ	Երկրաբանական հուշարձան
Զորաղբյուրի (Մանգյուսի) բրածո ֆլորա	գյուղ Զորաղբյուր	Երկրաբանական հուշարձան
«Հաղպրտանք» աղբյուր	Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարեկյան) թաղամասի արլ. ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
«Համով» աղբյուր	Ակունք գյուղի հվ-արմ. ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
«Քաղցր» աղբյուր	Արգնի գյուղից 150 մ հվ-արմ., Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
«Զորի» աղբյուր	Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
«Ավազան» աղբյուր	Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
«Սագերի» լիճ	Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս.	Ջրագրական հուշարձան
«Վիշապա» լիճ	Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ.	Ջրագրական հուշարձան
«Բազմալիճք» լիճ	Սևաբերդ գյուղից մոտ 3 կմ հս.	Ջրագրական հուշարձան

«Լուսնավիճ» լիճ	Սևաբերդ գյուղից մոտ 7 կմ հս-արլ.	Զրագրական հուշարձան
«Ողջաբերդ» բնապատմական համալիր	Ողջաբերդ գյուղի հս-արլ. մասում	Բնապատմական հուշարձան
«Ռեկոնստրուկցիոն կրկես Քյոթոլի լեռան մոտ»	Արտավազ գյուղի մոտ	Կենսաբանական հուշարձան
«Ալայան գորգ»	Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպասարի գագաթային մասում, ծ.մ-ից 300 մ բարձրության վրա)	Կենսաբանական հուշարձան
«Թանթրվենի, Տիգրանի»	Արզնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա	Կենսաբանական հուշարձան

Ուսումնասիրվող տարածքին մոտ գտնվող բնության հուշարձաններ չկան:

2.9 Պատմամշակութային հուշարձանների ցանկը

Գյուղից 1 կմ հարավ-արևմուտքում կա մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կիկլոպյան ամրոցի ավերակներ և մ.թ.ա. 1-ին հազարամյակի դամբարանադաշտ:

2.10 Սոցիալ- տնտեսական բնութագիրը

Գառնի համայնքի Գեղաղիի գյուղ

Բնակչություն՝ 730

Համայնքի ներկայիս անվանումը - Գեղաղիի

Համայնքի պատմական անվանումը - Գեղաղիի

Համայնքի հիմնադրման ժամանակաշրջանը - 1924թ.

Որ համայնքներին է սահմանակից համայնքը - Գառնի, Հացավան, Ողջաբերդ,

Համայնքի մակերեսը - 1398.4 հա

Հեռավորությունը մայրաքաղաքից -15կմ

Բնակչության թիվը - 730

Բնակչության կազմը - հայեր

Օգտակար հանածոներ - չկան

Կրթական հաստատություններ - Գեղաղիի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

Մշակութային հաստատություններ - գրադարան

Մարզական հաստատություններ - չկան

Արտադրական ձեռնարկություններ - հացի արտադրամասեր

Բնակչության հիմնական զբաղմունքը - այգեգործություն, անասնապահություն

Հայտնի մարդիկ - չկան

Հոգևոր կառույցներ - Ս.Հովհաննես մատուռ, կառուցված 2009թվականին

Պատմամշակութային հուշարձաններ - Հայրենական Մեծ պատերազմի զոհվածների հուշարձան

Համայնքի մասին գրքի առկայություն - չկա

Պատմական այլ տվյալներ - համայնքի տարածքում գտնվում է երեք հուշարձանների պահպանման գոտի:

Գեղադիր գյուղ Կոտայքի մարզում, Ողջաբերդի լեռների արևմտյան լանջին, Երևան-Գառնի մայրուղու վրա, մարզկենտրոնից 54 կմ հարավ-արևմուտք: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1880 մ բարձրության վրա:

Գյուղը նախկինում կրել է Քյարփիչլու, Քարփիչլու, Քյարփնչլու անունը: Գեղադիր է վերանվանվել 1935 թվականին:

Նախնիների մի մասը 1917-1924 թթ.-ին այստեղ են գաղթել Վանի, Ռշտունիքի, Խիզանի, Աբաղայի, Մոկսի, Խնուսի, Կարսի, Բիթլիսի գյուղերից: Մինչ այդ գոյություն է ունեցել թյուրքալեզու մուսուլմաններ:

Գեղադիրի ազգաբնակչության փոփոխությունը

Տարի	1873	1897	1914	1926	1939	1959	1979	1989	2001	2011
Բնակիչ	141	257	290	250	464	457	500	589	676	738

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ:

Պատմական ակնարկ

Գյուղ Գեղամա լեռնաշղթայի, Ողջաբերդի լեռնաբազուկի արևմտյան լանջին, Արովյանից 14 կմ հարավ-արևելք: նախկինում /1935թ./ կոչվել է Քյարփիչլու: Բնակիչների նախնիները եկել են Վանից, Խնուսից, Կարսից, Բիթլիսից 1918-1924 թվականներին: Գեղադիրից հարավ-արևմուտք բացվել է սև և կարմիր քարերից

պատրաստված ք.ծ.ա. 7-3-րդ դդ. ծածկված 4 սարկոֆագ, որոնց մեջ հանգուցյալները թաղված են եղել կուչ եկած դիրքով: Գտնվել են կապտավուն պորֆիրիտից պատվանդանով սկահակ, կավե սափոր, նետասլաքներ, դաշույնի դաստակ բրոնզե ապարանջաններ սերդուլիկե և ապակե գույնզգույն ուլունքներ, մուգ մանուշակագույն ապակե բազմանիստ կնիք: Բնակչության մեծ մասը գաղթել է Արևմտյան Հայաստանից: Հիմնական զբաղմունքը հացահատիկի մշակությունն ու անասնապահությունն է: Գյուղը գտնվում է Երևան - Գառնի մայրուղու վրա:

3. ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Կոտայքի մարզի, Գառնի համայնքի, Գեղադիր բնակավայրի, 5-րդ փողոցի, 26 հողամասում կառուցվող 288 աշակերտի համար դպրոցի տեղակայման նախագիծը իրականացվել է ըստ պատվիրատուի /Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի/ կողմից տրված տեխնիկական առաջադրանքի և համաձայն ՀՀՇՆ պահանջների: Ներկայացված նախագծով կառուցապատման տարածքը զբաղեցնում է 2692.3 քմ, իսկ կանաչապատման տարածքը՝ 6805.79 քմ:

Նախագծի համար հիմք են հանդիսացել համայնքի ղեկավարի կողմից 26.02.2025թ. տրված N3 ճարտարապետահատակագծային առաջադրանքը, հողամասի կադաստրային վկայականն ու տարածքի գեոդեզիական հանույթը: Նախագծման ընթացքում հաշվի են առնվել պատվիրատուի պահանջներն ու առաջարկությունները:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ:

- Հողամասի մակերեսը - 15215.49 քմ
- Կառուցապատման մակերես - 2692.3 քմ
- Ընդհանուր մակերես - նկուղ-1539.9 քմ, վերգետնյա - 5786.2 քմ, այդ թվում
 - 1-ին մասնաշենք - վերգետնյա -1433.5 քմ,
 - 2-րդ մասնաշենք - նկուղ- 926.2 քմ, վերգետնյա - 2560.9 քմ,
 - 3-րդ մասնաշենք - նկուղ - 613.7 քմ, վերգետնյա - 1359.8 քմ,
 - 4-րդ մասնաշենք - վերգետնյա - 435.9 քմ:
- Ասֆալտապատ մակերես - 4410.0 քմ,
- Բազալտե ջարդոնից մայրեր - 420.0 քմ,
- Բաց սպորտհրապարակ - 779.2 քմ
- Հենապատերի մակերեսը - 108.2 քմ
- Կառուցապատման ընդհանուր մակերեսը /անջարնցիկ/ - 8409.7 քմ
- Կառուցապատման տոկոս - 55.27 %
- Կանաչապատման մակերեսը - 6805.79 քմ
- Կանաչապատման տոկոս - 44.73 %

Տարածքը նախատեսված է պարսպապել՝ նախատեսելով մեկ մուտք հիմնական ճակատի կողմից: Տարածքը ցանկապատվում է մետաղական ցանկապատով: Տարածքը ունի ընդհանուր մեկ մուտք: Տարածքը բարեկարգվում է: Իրականացվում են ասֆալտապատ ճանապարհներ ավտոմեքենաների համար: Կառույցի շուրջը իրականացվում է սալվածք բազալտե ջարդոնից:

Դպրոցի սաների համար նախատեսվում է կառուցել բաց սպորտհրապարակ 779.0քմ:

Դպրոցային համալիրը հողամասի պարագծով ցանկապատվում է մետաղական 1.5մ բարձրությամբ ցանկապատերով: Գլխավոր հատակագծում նշված հատվածներում ելնելով ռելիեֆի անհարթություններից նախատեսվում է կառուցել ե/բ հենապատեր: Դպրոցային համալիրը ունի մեկ մուտք, որում տեղադրվում են մետաղական դարպաս և մետաղական դռնակ:

Գլխավոր հատակագծում նշված վայրում նախատեսվում է կազմակերպել արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում, որոնց մի մասը տեղադրվելու է շենքի տանիքին: Գետնին տեղակայված ֆոտովոլտային վահանակների վնասվածքներից պաշտպանության նկատառումներից ելնելով նախատեսվում է դրանց տարածքը սահմանազատել մետաղական ցանկապատով, տեղադրել մուտքի դարպաս: Սահմանազատված տարածքում է տեղակայվելու նաև էլ. ենթակայանը:

Կանաչապատ տարածքներում նախատեսվում է իրականացնել բուսահոի լիցք, սերմի ցանք: Նախատեսվում է իրականացնել նոր ծառատեսակների և թփերի տնկման աշխատանքներ: Տնկվող ծառատեսակներից են հացենի, թեղի, գիհի, եղնի, ուռենի, ակացիա և այլն: Նախատեսվում է իրականացնել տեղանքին համապատասխան թփերի տնկման աշխատանքներ:

Նախատեսվում է իրականացնել տարածքի արտաքին լուսավորության ցանցի մոնտաժման աշխատանքներ:

Նախատեսվում է իրականացնել նոր ոռոգման ցանցի և ոռոգման պոմպակայանի կառուցման աշխատանքներ:

3.1 Ճարտարապետական մաս

Համաձայն նախագծի միջնակարգ դպրոցը նախատեսվում է կառուցել 288 աշակերտի: Դպրոցը նախագծված է չորս մասնաշենքով: Բացի նշված մասնաշենքերից, դպրոցի հողամասի տարածքում տեղադրված են նաև օժանդակ շինություններ՝ կաթսայատուն և տրանսֆորմատորային ենթակայան: Դպրոցային համալիրի ուսումնական բոլոր մասնաշենքերը իրարից բաժանված են հակասեյսմիկ կարաններով:

Դպրոցային համալիրի առաջին մասնաշենքը /տարրական դպրոց/ հատակագծում ունի ուղղանկյան ձև և 27,6 x 20,0 մ առանցքային չափեր: Այն եռահարկ է, առանց նկուղային հարկի: Այնտեղ տեղադրված են տարրական դասարանները, ներառական դասարան, և մարզասրահ - խաղասենյակ, շախմատի դասարան և այլն:

Երկրորդ մասնաշենքը /կենտրոնական/ իր մեջ պարունակում է. առաջին հարկում մուտքային հարթակը թեքուղիներով, նախասրահը, հանդիսությունների դահլիճը, ճաշասրահը, կենտրոնական աստիճանը, տնօրենի աշխատասենյակը, մեկ վերելակ, երկրորդ հարկում ուսմասվարների /միջին և տարրական դպրոցների /աշխատասենյակները, և կաբինետներ: Երրորդ հարկում տեղադրված են գրադարանը, նույնպես կաբինետներ և լինգաֆոնային կաբինետ: Կիսանկուղային հարկում տեղադրված է ճաշարանի խոհանոցը իր օժանդակ սենքերով:

Երրորդ մասնաշենքը՝ միջին և ավագ դպրոցն է իր դասասենյակներով, կաբինետներով և սանհանգույցներով, որը հատակագծում ունի 29.4 x 20.0մ չափսեր: Մասնաշենքը եռահարկ է, մի հատվածում մայն երկհարկանի: Այստեղ են գտնվում Քիմիայի, Ֆիզիկայի և կենսաբանության կաբինետները: Նկուղային հարկում՝ հրաձգարան , սանհանգույցներ և օժանդակ տարածքներ:

Դպրոցային համալիրի չորրորդ մասնաշենքը /մարզադահլիճ/ հատակագծում ունի ուղղանկյան ձև և 26,0 x 15,7 մ առանցքային չափեր: Այն մեկհարկանի է, մարզական գույքի սենյակով: Նկուղային հարկ չունի: Դպրոցի տարածքը կանաչապատվում է և տեղադրվում է մարզական խաղահարթակ:

Դպրոցի տարածքում նախատեսվում են նաև կաթսայատուն և տրանսֆորմատորային ենթակայան:

3.2 Կոնստրուկտորական մաս

Նախագծի մշակումը կատարվել է համաձայն ՀՀ տարածքում գործող հետևյալ նորմերի՝

ՀՀՇՆ 20.04-2020 Սեյսմակայուն շինարարություն. նախագծման նորմեր,

ՀՀՇՆ 31-03-2020 «Հասարակական շենքեր և շինություններ»,

ՀՀՇՆ 31-04-2022 «Տանիքներ և տանիքածածկեր»,

ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. հիմնական դրույթներ»,

ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար»,

ՀՀՇՆ 31-03.02-2022 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ»,

Նախագծի կոնստրուկտորական մասում որպես ելակետային տվյալներ հանդիսացել են տեղանքի բնահողի երկրաբանական և երկրաֆիզիկական հետազոտությունները, ինչպես նաև նախագծի ճարտարապետական մասը:

Համալիրը գտնվում է II սեյսմիկ գոտում:

Ըստ «ՀԱՅԲ ԵՎ ՈՐԴԻ ՏԻՏԻԶՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից տրված ինժեներաերկրաբանական եզրակացության, համալիրի համար որպես հիմնատակ ծառայում են պինդ ավազակավ՝ մանրախճա-խճավազային լցոնով:

Տարածքի գրունտները համապատասխանում են սեյսմիկ III կարգի:

Շենքի հիմնակմախքի կրողունակության և կայունության հաշվարկները կատարվել են *Лира Санр* հաշվարկային համակարգի միջոցով:

Որպես բեռնվածքներ հաշվարկներում ընդունվել են մշտական, ժամանակավոր երկարատև, ժամանակավոր կարճատև, քամու ազդեցություն և սեյսմիկ բեռնվածք: Հաշվարկային սխեմայի հիմքի ամրացումը ընդունվել է և կոշտ ամրակցված և ընկրկելի, իսկ արդյունքներից վերցվել է վատագույնը բոլոր կրող

տարրերի համար: Սեյսմիկ հաշվարկներում իներցիոն ուժերը հաշվարկվել են ՀՀՇՆ 20.02-2020 նորմատիվային փաստաթղթի բանաձևերով:

Նախագծված կոնստրուկցիաները հաշվարկված են ըստ նրանց կրողունակության՝ բեռնվածքների հատուկ զուգակցման տակ:

Համաձայն ՀՀՇՆ 20.02-2020 գործող նորմերի սեյսմիկ հաշվարկներում ընդունվել են՝

Շենքերի և կառուցվածքների թույլատրելի վնասվածության գործակից $K1=0.4$

Շենքերի և կառուցվածքների պատասխանատվության գործակից $K2=1.3$

Գրունտային պայմանների վերացական գործակից $K0=1,1$

Ուսումնական առաջին մասնաշենք.

Առաջին մասնաշենքը հատակագծում ունի բարդ ուրվագիծ, որի հիմնական մասը ուղղանկյունաձև է $20,70 \times 20,0$ մ առանցքային չափերով, որը «Գ» առանցքին հարակից առկա է Դ-աձև հատակագծային ուրվագծով ելուն, որի չափերն են. «Բ» և «Գ» առանցքների միջև՝ $6,90 \times 13,40$ մ, «Ա» և «Բ» առանցքների միջև՝ $5,10 \times 7,20$ մ:

Նախագծվող մասնաշենքի համար որպես կոնստրուկտիվ սխեմա է ընտրված երեք վերգետնյա հարկերով միաձույլ ե/բետոնյա շրջանակակապային համակարգը, որի ծածկերը միաձույլ ե/բետոնից են և ծառայում են որպես կոշտ սկավառակ:

Կոնստրուկտիվ հաշվարկների հիման վրա, քննարկվող մասնաշենքի կրող կոնստրուկտիվ տարրերի հիմնական բնութագրումները հետևյալն են.

Հիմքեր - Միաձույլ ե/բետոնից են, որոնք կազմված են խաչահատվող 80×80 (հ) սմ հատվածքի մակերեսով հինային հեծաններից՝ ամրանավորված A500-с դասի ձողային և A240-с դասի լայնական անուրներից՝ 100 և 200 մմ քայլով, տեղադրված հիմնային սալի վրա 30սմ հաստ. ամրանավորված երկտակ ցանցով $\Phi 14A500c$: Հիմնային հեծանները սյուների հարակից մասերում ունի լայնացումներ, որոնք անհրաժեշտ են ցանցերով՝ A500-с դասի, քայլը՝ 150 սմ,

Ե/բետոնյա հիմնակմախք - Հիմնակմախքը կազմված է միաձույլ ե/բետոնյա սյուներից, պարզունակներից և կոշտության պատերից (դիաֆրագմա), որոնց մասին՝ ստորև.

- Սյուներ - Հիմնականում 50x50 սմ հատվածքի մակերեսով, ամրանավորված A500-с դասի երկայնական ձողային և A240-с դասի լայնական անուրներով՝ 100 և 200 մմ քայլով,

- Պարզունակներ - Հիմնականում ունեն 50x65 (h) սմ հատվածքի մակերես, ամրանավորված A500-с դասի երկայնական ձողային և A240-с դասի լայնական անուրներով՝ 100 և 200 մմ քայլով,

- Կոշտության պատեր - Նախատեսված են միաձույլ ե/բետոնից 20 սմ հաստությամբ, որոնք ամրանավորվում են A500-с դասի երկտակ ամրանային ցանցերով, որոնց տարածական աշխատանքը ապահովվում է ամրանային A240-с դասի կեռիկներով՝ 60x60 սմ բջիջներով,

Ծածկեր - Ծածկերը նախատեսվում են միաձույլ ե/բետոնից, որոնց սալի հաստությունը ընդունված է 20 սմ հաստությամբ: Ծածկի սալերը ամրանավորվում են երկտակ A500-с դասի ամրանային ցանցերով, քայլը հիմնականում 200 մմ, որոնք կապվում են տակդիր կեռիկներով A240-с դասի լայնական ամրաններով՝ 60 սմ քայլով,

Ներքին և արտաքին աստիճանավանդակ - Ներքինը նախատեսված է իրականացնել միաձույլ ե/բետոնից, որոնց սալի հաստությունը ընդունված է 16 սմ: Սալն ամրանավորված է երկտակ A500-с դասի ամրանային ցանցերով, որոնք կեռիկների և խարսխային կեռիկներով տարածական կապված են իրար հետ A240-с դասի լայնական ամրաններով: Արտաքին աստիճանները հարակից են «Բ» առանցքին, տեղակայված «3» և «4» առանցքների միջև, որը նույնպես միաձույլ ե/բետոնից է, իսկ աստիճանները ներքնի մասում նույնպես աստիճանաձև է: Աստիճանները հենվում է նրանց միջին մասում տեղակայված ե/բետոնյա երկճյուղանի մույթի վրա:

Բոլոր տիպի կրող կոնստրուկցիաների համար նախատեսվում է օգտագործել «B25» դասի ծանր լցանյութերով բետոն, որը տեղադրել պարտադիր խտացումով:

Դպրոցական համալիրի առաջին մասնաշենքի կրող կոնստրուկցիաների տեխնիկական բնութագրումները (կոնստրուկցիաների հատվածքի մակերես,

հաստություն բետոնի և ամրանի դաս, և այլն) ստացել ենք մասնաշենքի կոնստրուկտիվ սխեմայի հաշվարկով, որը կատարվել է «LIRA-SARP-2021» ծրագրով:

Ուսումնա-վարչական երկրորդ մասնաշենք.

Երկրորդ մասնաշենքը հատակագծում ունի բարդ ուրվագիծ՝ 32,75/В/х49,35/Л/մ անկյունագծային չափեր, որը առաջին և երրորդ մասնաշենքից տարանջատված է դեֆորմացիոն (սեյսմիկ) կարաններով: Երրորդ մասնաշենքի համար որպես կոնստրուկտիվ սխեմա է ընտրված երեք վերգետնյա և մեկ ստորգետնյա հարկերով միաձույլ ե/բետոնյա շրջանակակապային համակարգը, որի ծածկերը հիմնականում միաձույլ ե/բետոնից են և ծառայում են որպես կոշտ սկավառակ:

Մասնաշենքում հանդիսությունների դահլիճի ծածկը նախատեսվում է իրականացնել պողպատե գլոցվածքներից սարքված ֆերմաներով, որոնց տարածական աշխատանքը ապահովվում է պողպատե ուղղաձիգ և հորիզոնական կապերով:

Շինությունը կենտրոնական հատվածում, 1-ին հարկում, «9»-ից «12» առանցքների միջակայքում ունի վեցանկյուն բազմանկյան տեսք ունեցող ելունային մաս, որի $\pm 0,000$ նիշում տեղակայված է հանդիսությունների դահլիճը՝ 3,55-ից 9,25 մ թեք տեղադրված հարկի բարձրությամբ (հատակից ֆերմա): Դահլիճի տանիքածածկը միալանջ է, իրականացված պողպատե գլոցվածքներից սարքվող ֆերմաներով:

Մասնաշենքի «9/1» և «11/1» առանցքներին կից բջիջներում նախատեսված է իրականացնել միաձույլ ե/բետոնե կենտրոնական աստիճանավանդակներն ու հարակից ձախ կողմում վերելակի հորանը, որը սպասարկում է բոլոր հարկերը՝ - 3,600-ից +7,200 նիշով:

Նկուղային հարկի բարձրությունը կազմում է 3,00 մ (հարկից-հարկ), իսկ թվով երեք վերգետնյա հարկերինը՝ 3,6 մ (հարկից-հարկ): Կոնստրուկտիվ հաշվարկների հիման վրա կատարված, քննարկվող մասնաշենքի կրող կոնստրուկտիվ տարրերի հիմնական բնութագրումները հետևյալն են.

Հիմքեր - Միաձույլ ե/բետոնից են, որոնք կազմված են խաչահատվող 80x80 (h) սմ հատվածքի մակերեսով հինային հեծաններից՝ ամրանավորված A500-с դասի ձողային և A240-с դասի լայնական անուրներից՝ 100 և 200 մմ քայլով: Հիմնային հեծանները սյուների կենտրոնական առանցքի մասում ունի լայնացում, որը ամրանավորված է A500-с դասի ցանցերով, քայլը՝ 150 սմ,

Ե/բետոնյա հիմնակմախք - Հիմնակմախքը կազմված է միաձույլ ե/բետոնյա սյուներից, պարզունակներից և կոշտության պատերից (դիաֆրագմա), որոնց կոնստրուկտիվ բնութագրումները հետևյալն են.

- Սյուներ - Հիմնականում 50x50 սմ հատվածքի մակերեսով են, ամրանավորված A500-с դասի երկայնական ձողային և A240-с դասի լայնական անուրներով՝ 100 և 200 մմ քայլով: Առկա են նաև 1000x500 մ և 1500x500 մմ մույթեր, որոնց ամրանավորումը նույնանման է հիմնական սյուներին,

- Պարզունակներ - Հիմնականում ունեն 50x65 (h) սմ հատվածքի մակերես, ամրանավորված A500-с դասի երկայնական ձողային և A240-с դասի լայնական անուրներով՝ 100 և 200 մմ քայլով,

- Կոշտության պատեր - Նախատեսված են միաձույլ ե/բետոնից 20 սմ հաստությամբ, որոնք ամրանավորվում են A500-с դասի երկտակ ամրանային ցանցերով, որոնց տարածական աշխատանքը ապահովվում է ամրանային A240-с դասի կեռիկներով՝ 60x60 սմ բջիջներով,

Ծածկեր - Ծածկերը նախատեսվում են միաձույլ ե/բետոնից, որոնց սալի հաստությունը ընդունված է 20 սմ: Ծածկի սալերը ամրանավորվում են երկտակ A500-с դասի ամրանային ցանցերով, քայլը հիմնականում 200 մմ, որոնք ամրակապվում են տակդիր A240-с դասի լայնական ամրաններով՝ 60 սմ քայլով և ունեն կեռիկների ձև,

Ներքին և արտաքին աստիճանավանդակ - Նախատեսված են իրականացնել միաձույլ ե/բետոնից, որոնց սալի հաստությունը ընդունված է 16 սմ: Սալն ամրանավորված է երկտակ A500-с դասի ամրանային ցանցերով, որոնք կեռիկների և խարսխային տակդիր էլեմենտներով տարածական կապված են իրար հետ A240-с դասի լայնական ամրաններով: Ամրանավորված են նաև աստիճանահատերը,

Տանիք - Լանջավոր է, իրականացված պողպատե գլոցվածքներից սարքված կրող տարրերով, որոնց տարածական աշխատանքը ապահովվում է մետաղական կապերի միջոցով:

Բոլոր տիպի կրող կոնստրուկցիաների համար նախատեսվում է օգտագործել «B25» դասի ծանր լցանյութերով բետոն, որը պետք է տեղադրել պարտադիր խտացումով:

Դպրոցական համալիրի երկրորդ մասնաշենքի կրող կոնստրուկցիաների տեխնիկական բնութագրումները (կոնստրուկցիաների հատվածքի մակերես, հաստություն բետոնի և ամրանի դաս, և այլն) ստացել ենք մասնաշենքի կոնստրուկտիվ սխեմայի հաշվարկով, որը կատարվել է «LIRA-SARP-2021» ծրագրով:

Ուսումնական երրորդ մասնաշենք.

Երրորդ մասնաշենքը հատակագծում ուղղանկյունաձև է՝ 20.0x38,1 մ առանցքային չափերով, որը երկրորդ և չորրորդ մասնաշենքերից տարանջատված է դեֆորմացիոն (սեյսմիկ) կարանով:

Երրորդ մասնաշենքի համար որպես կոնստրուկտիվ սխեմա է ընտրված երեք վերգետնյա և մեկ ստորգետնյա հարկերով միաձույլ ե/բետոնյա շրջանակակապային համակարգը, որի ծածկերը հիմնականում միաձույլ ե/բետոնից են և ծառայում են որպես կոշտ սկավառակ:

Մասնաշենքում աստիճանավանդակները ներքին են, որոնք տեղակայված են «14» - «15» և «18» - «18/1» առանցքների միջև:

Կոնստրուկտիվ հաշվարկների հիման վրա կատարված, քննարկվող մասնաշենքի կրող կոնստրուկտիվ տարրերի հիմնական բնութագրումները հետևյալն են.

Հիմքեր - Միաձույլ ե/բետոնից են, որոնք կազմված են խաչահատվող 80x80 (հ) սմ հատվածքի մակերեսով հինային հեծաններից՝ ամրանավորված A500-с դասի ձողային և A240-с դասի լայնական անուրներից՝ 100 և 200 մմ քայլով, տեղադրված հիմնային սալի վրա 30սմ հաստ. ամրանավորված երկտակ ցանցով Ф14A500с:

Ե/բետոնյա հիմնակմախք - Հիմնակմախքը կազմված է միաձույլ ե/բետոնյա սյուներից, պարզունակներից և կոշտության պատերից (դիաֆրագմա), որոնց կոնստրուկտիվ բնութագրումները հետևյալն են.

- Սյուներ - Հիմնականում 50x50 սմ հատվածքի մակերեսով են, ամրանավորված A500-с դասի երկայնական ձողային և A240-с դասի լայնական անուրներով՝ 100 և 200 մմ քայլով,

- Պարզունակներ - Հիմնականում ունեն 50x65 (h) սմ հատվածքի մակերեսով, ամրանավորված A500-с դասի երկայնական ձողային և A240-с դասի լայնական անուրներով՝ 100 և 200 մմ քայլով,

- Կոշտության պատեր - Նախատեսված են միաձույլ ե/բետոնից 20 սմ հաստությամբ, որոնք ամրանավորվում են A500-с դասի երկտակ ամրանային ցանցերով, որոնց տարածական աշխատանքը ապահովվում է ամրանային A240-с դասի կեռիկներով՝ 60x60 սմ բջիջներով,

Ծածկեր - Ծածկերը նախատեսվում են միաձույլ ե/բետոնից, որոնց սալի հաստությունը ընդունված է 20 սմ: Ծածկի սալերը ամրանավորվում են երկտակ A500-с դասի ամրանային ցանցերով, քայլը հիմնականում 200 մմ, որոնք ամրակապվում են տակդիր A240-с դասի լայնական ամրաններով՝ 60 սմ քայլով և ունեն կեռիկների ձև,

Ներքին և արտաքին աստիճանավանդակ - Նախատեսված են իրականացնել միաձույլ ե/բետոնից, որոնց սալի հաստությունը ընդունված է 16 սմ:

Սալն ամրանավորված է երկտակ A500-с դասի ամրանային ցանցերով, որոնք կեռիկների և խարսխային տակդիր էլեմենտներով տարածական կապված են իրար հետ A240-с դասի լայնական ամրաններով: Ամրանավորված են նաև աստիճանահատերը,

Տանիք - Լանջավոր է, իրականացված պողպատե զլոցվածքներից սարքված կրող տարրերով, որոնց տարածական աշխատանքը ապահովվում է պողպատե կապերի և մարդակների միջոցով:

Շինարարության ժամանակ հիմքերի փոսորակները -4,850 (1594,15) նիշով բացելուց հետո և հիմքերը կառուցելուց առաջ,անրաժեշտ է շին. հրապարակ

հրավիրել ինժեներական անձնակազմի՝ կատարել լրացուցիչ հետազննում, ըստ որի տեղում անրաժեշտ է ունենալ ինժեներ - երկրաբանի համապատասխան եզրակացությունը, կազմել համապատասխան ակտ-արձանագրություն, որից հետո թույլատրվում է կատարել հիմքերի տեղադրման աշխատանքները: Հողային աշխատանքներից հետո, հիմքերի տեղադրման խորությունը ճշտելուց հետո, անհրաժեշտության դեպքում, պետք է նախագծա-նախահաշվային փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխություններ, հարկ եղած դեպքում, տալով կոնստրուկտիվ նոր լուծումներ:

Անրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ՝ բացառելու արտահոսած և մթնոլորտային ջրերի (վթարված կոմունիկացիաներից արտահոսած տեխնածին ջրեր) թափանցումը կառուցվող մասնաշենքերի հիմնատակ:

Կոնստրուկտորական գծագրերում ընդունված ± 0.000 հարաբերական նիշը համապատասխանում է բացարձակ 1599,0 նիշին:

Հիմքերի և հատակների հետլիցքը իրականացնել տեղի քանդված գրունտով(բացառել շին. աղբի եվ բուսահողի առկայությունը) շերտային տոփանումով՝ խտությունը հասցնելով $g/գր = 1.7$ տ/մ³:

Դպրոցական համալիրի մասնաշենքերի արտաքին պատերը իրականացնել 20սմ հաստությամբ բետոնե ծակոտկեն բլոկներով, հիմնակմախքի լցվածքի տեսքով, որոնք ամրացվում են ե/բ տարրերին ճկուն կապերով, կարկասի հետ ունեն $b=20$ մմ լայնությամբ կարաններ և չեն մասնակցում հիմնակմախքի աշխատանքներին: Պատերի շարվածքը կատարվում է ուղղաձիգ և հորիզոնական ամրանավորումով: Ծակոտկեն բլոկների անցքերը ամբողջությամբ լցվում են B 7.5 դասի թեթև լցանյութերից բետոնով:

Միջնորմերը իրականացնել բետոնյա թեթև բլոկներով ($b=10$ և 20 սմ), որոնք կրող կոնստրուկցիաների հետ միացվում են ճկուն կապերով:

Աշխատանքները պետք է իրականացվեն մասնագիտացված շինարարական կազմակերպության կողմից՝ մշտական տեխնիկական և հեղինակային հսկողությամբ, անվտանգության և սանիտարա-հիգիենիկ նորմերի պահանջներին համապատասխան: Հողային աշխատանքները և հիմքերի իրականացումը

կատարել ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխան:

Պողպատի, ամրանի և բետոնի որակը պետք է համապատասխանի ՀՀ-ում գործող տեխնիկական չափորոշիչներին: Ամրանային աշխատանքները նախատեսված է իրականացնել Ռուսաստանի կամ Ուկրաինայի արտադրության A500-с և A 240-с դասի ամրանի առանձին ամրանաձողերով: Ամրանաձողերը տեղադրելուց առաջ մաքրել կեղտից և յուղից: Բոլոր տիպի ե/բետոնյա էլեմենտների համար օգտագործվում է B25 դասի ծանր լցանյութերով բետոն՝ $\gamma=2400$ կգ/մ³:

Երկաթբետոնի ձգման և սեղման առաձգականության մոդուլը $E/6= 3060000$ տ/մ²: Բոլոր ամրանային աշխատանքները բետոնացնելուց առաջ ենթակա են ստուգման տեխնիկական և հեղինակային հսկողության ներկայացուցիչների կողմից՝ համապատասխան ծածկած աշխատանքների ակտերի ստորագրությամբ:

Չորրորդ մասնանաշենք (Մարզադահլիճային մասնաշենք).

Թիվ 4 մասնաշենքը հատակագծում ունի ուղղանկյունաձև ուրվագիծ առանցքային չափերով, որը ունի մեկ վերգետնյա հարկ, մարզադահլիճային մասում՝ 6,10 մ, ֆերմաների տակ, իսկ մարզադահլիճային մասի մարզագույքի սենքի հատվածում՝ 4,50 մ: Մարզադահլիճի տանիքածածկը նախատեսված է պողպատե գլոցվածքներից պատրաստվող ֆերմաներով: Մարզադահլիճային մասնաշենքի համար որպես կոնստրուկտիվ սխեմա է ընտրված միաձույլ ե/բետոնյա շրջանակակապային հիմնակմախքով, մարզադահլիճի մասում պողպատե գլոցվածքներից նախատեսվող երկլանջանի ֆերմաներով:

Ընտրված համակարգը կազմված է հետևյալ հիմնական կրող տարրերից.

Հիմքեր - Ժապավենաձև են, միաձույլ ե/բետոնից, որոնց հատվածքի մակերեսներն են 80x80 սմ, ամրանավորված են երկայնական A500-с դասի ձողերով և կրկնակի ամրաններով՝ A240с դասի՝ 100 և 200 մմ քայլով, տեղադրված հիմնային սալի վրա 30սմ հաստ. ամրանավորված երկտակ ցանցով $\Phi 14$ A500с: Ժապավենաձև հիմքերում տեղադրված են նաև կողային ամրաններ A500-с դասի,

Սյուներ - Միաձույլ ե/բետոնից են, 50x50 սմ և 50x90 սմ հատվածքի մակերեսներով, որոնք ըստ հաշվարկի արդյունքների, ամրանավորված են A500-с

դասի երկայնական ձողերով և A240c դասի լայնական ամրաններով, որոնց քայլը ընդունված է 100 և 200 մմ,

Հեծան-գոտիներ և ֆերմաներ - Մասնաշենքը միահարկ է:

Մասնաշենքի պարագծով տեղակայված են 50x65 (հ) սմ հատվածքի մակերեսներով հեծան-գոտիներ, որոնք ամրանավորված են A500-с դասի ձողերով և կրկնակի Ac-I դասի անուրներով 100 և 200 մմ քայլով:

Մարգադահլիճային հատվածամասի տանիքածածկը նախատեսված է պողպատե գլոցվածքներից պատրաստվող երկթեք ֆերմաներով, որոնց թռիչքը կազմում է 15,0մ:

Ծածկեր - Մարգադահլիճային մասում ծածկը պողպատե ֆերմաներից են, որի սլաքի $h = 3860$ մմ,

Կոշտության պատեր (դիաֆրագմաներ) - Մասնաշենքի սեյսմակայունության ապահովման նպատակով, արտաքին ե/բետոնյա շրջանակների միջև, բոլոր հարկերում, նախատեսված է տեղակայել կոշտության պատեր 20 սմ և 35սմ հաստությամբ, որոնց ամրանավորումը նախատեսված է երկտակ ցանցերով A500-с դասի ամրաններից, որոնք լայնական ուղղությամբ ամրակապված են իրար խարսխաձողերի և կեռաձև ամրակապող տարրերի միջոցով:

Բոլոր տիպի կրող կոնստրուկցիաների համար նախատեսվում է օգտագործել «B25» դասի ծանր լցանյութերով բետոն, որը տեղադրել պարտադիր խտացումով:

Շենքի կոնստրուկտիվ սխեմայի հաշվարկը ըստ սեյսմիկ ազդեցության կատարվել է համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 («Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր») շին.նորմերի՝ օգտագործելով «LIRA-SAPR -2021» հաշվարկային ծրագիրը:

Հաշվարկները իրականացված են LIRA-SAPR ծրագրերով: Սեյսմիկ ազդեցությունից հաշվարկի համար հիմնական ելակետային տվյալներ

Հաշվարկը ըստ ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Շինարարական նորմեր»՝

- սեյսմիկ գոտի՝ - 2 ($a=400$ սմ/վրկ²),
- գրունտի կարգը - III ($K_0=1,1$)
- թույլատրելի վնասվածքների գործակիցը - $K_1=0,4$,
- պատասխանատվության գործակիցը $K_2=1,3$ (աղյուսակ 9),
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը՝ 85սմ,
- շենքի հարկերի տեղափոխությունները և շեղվածքները որոշվել են

ՀՀՇՆ 20.04-2020-ի 41 կետի համաձայն:

Շենքի սեփական տատանումների առաջին ձևի պարբերությունների արժեքները երկայնական (X) և լայնական (Y) ուղղություններով համապատասխանաբար կազմում են՝

$$T_{x1} = 0,128 \text{վրկ}$$

$$T_{y1} = 0,136 \text{վրկ}$$

Շենքի առավելագույն շեղվածքի մեծությունները կազմում են

$$X \text{ ուղղությամբ} - 3,85 \text{մմ}$$

$$Y \text{ ուղղությամբ} - 1,94 \text{մմ}$$

Առավելագույն տեղափոխությունների մեծությունները կազմում են

$$X \text{ ուղղությամբ} - 5,10 \text{մմ}$$

$$Y \text{ ուղղությամբ} - 3,63 \text{մմ}$$

3.3 Արտաքին ջրամատակարարում և ջրահեռացում

Նախագծով նախատեսվում է՝

Ջրամատակարարումը իրականացնել նոր խորքային հորից:

Հորը գտնվում է Կոտայքի մարզի Գեղաղիբ համայնքում: Հորատանցքի խորությունը 156մ է: Հորատանցքը մինչև 156.0մ ամրակապված է 325մմ խողովակներով:

- Նախատեսել DN159 (ST) ջրհան խողովակներ:
- Նախատեսել տրանսֆորմատորային ենթակայան արտաքին տեղադրման և ծայրային խարսխային հենասյուն բաժանիչով:

Մինչև առկա ոռոգման առուների բաժանարար նախատեսված է ոռոգման գիծ պոլիէթիլենե DN225(HDPE) – L = 62.0մ խողովակներով: Խողովակների նախապատրաստական և պաշտպանիչ շերտերը նախատեսվում են իրականացնել ավագով:

Հորատանցքի վերականգնման դեպքում կբարելավվի հողերի ոռոգումը:

Շինարարական աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա հիմնականում սպասվում է հողային աշխատանքների, խողովակների եռակցման, հիդրոմեկուսացման աշխատանքների իրականացման ժամանակ, բետոնային աշխատանքների կատարման ընթացքում և շինարարական մեքենաների աշխատանքից (գազերի արտանետումներ, քուկային յուղեր, փոշի, աղմուկ):

Շինարարական աշխատանքները պետք է կատարվեն այնպես, որպեսզի կանխվի շրջակա միջավայրի քայքայումը և լավագույն ձևով պահպանվի բնական լանդշաֆտը: Շրջակա միջավայրը պետք է պաշտպանված լինի Կապալառուների ոչ պիտանի, քայքայող գործողություններից, բացառությամբ այն դեպքերի, երբ իրականացվում են հիմնական անհրաժեշտ աշխատանքներ: Շինարարական աշխատանքների ավարտվելուն պես անհրաժեշտ է իրականացնել վերականգնման աշխատանքներ, բարեկարգել տարածքը՝ կանխելու համար շրջակա միջավայրի հետագա քայքայումը:

Շինարարական կազմակերպությունը գնահատման ընթացքում, տեղում մանրամասն պետք է ուսումնասիրի բոլոր աշխատանքների տեսակները ըստ ծավալաթերթի և գծագրերի: Անհրաժեշտ է կազմել շինարարական աշխատանքների իրականացման տեխնոլոգիական սխեմաներ և շինարարության կազմակերպման սխեմաները: Այդ սխեմաներում ներառվելու են նաև շինարարության ընթացքում առաջացող հնարավոր բարդությունները:

Վերոհիշյալ աշխատանքները կամ այլ աշխատանքների տեսակները, որոնք պայմանավորված են շինարարության կազմակերպման և շինարարության իրականացման տեխնոլոգիաների հետ, անհրաժեշտ է ներառել ծավալաթերթ - նախահաշվում ներկայացված միավորի արժեքներում:

3.4 Ոռոգման ցանց

Նախագծով նախատեսվում է միջնակարգ դպրոցի բակային տարածքի բարեկարգման ենթակա հատվածի սիզամարգերի և ծառերի ոռոգման ցանցի իրականացում:

Նախագծի գլխավոր հատակագիծ, արտաքին ինժեներական ցանցեր և կանաչապատում մասը կատարված է համաձայն ճարտարապետա-հատակագծային առաջադրանքի և գործող շին. նորմերին ու կանոններին համապատասխան:

3.5 Սառը, տաք ջրամատակարարման, ջրահեռացման և տանիքի անձրևաջրերի հեռացման ցանցեր

Սառը, տաք ջրամատակարարման, ջրահեռացման և տանիքի անձրևաջրերի հեռացման ցանցերի նախագիծը մշակված է ըստ ճարտարապետական գծագրերի:

Շենքի հարկայնությունը 3 հարկ և նկուղ:

Շենքում նախագծվել է սառը, տաք ջրամատակարարման, ջրահեռացման և տանիքի անձրևաջրերի հեռացման ցանցեր:

Նախագիծը կատարված է համաձայն գործող շին և կ 40-01.01-2014, 40-01.02-2014, 40-01.03-2014 նորմերի:

Սառը ջրի սնուցումը կատարվում է քաղաքային ջրմուղի մ125մմ ցանցից մ 50մմ խողովակով: Տաք ջրամատակարարումը նախատեսված է դպրոցի տարածքում նախատեսվող անհատական կաթսայատնից: -3,00 նիշում նախատեսվում է ջրի պաշարի բաք $v=50$ խմ չժանգոտվող պողպատից բետոնե հենարանների վրա: Բաքի ներսում ջրի մոտեցման հատվածում նախատեսել ջրի հորիզոնը ազդարարող սարք փ50: Բաքին կից -3,00 նիշում նախատեսել ինվենտորային 2 պոմպով համալիր $q=2.94$ մա/ժ, $h=80$ մ, $n = 3.0$ կվտ ջրամատակարարման և հրդեհաշիջման ցանցերը նախատեսված են համակցված: Ցանցի համար նախատեսված են պոլիպրոպիլենե խողովակներ մ32 փ15մմ և պողպատե մ50: Արտաքին ջրամատակարարման ցանցը ջրաչափական հորից

մինչև կաթսայատուն նախատեսված է պոլիէթիլենե խողովակ մ63x5.8: Կենցաղային կեղտաջրերը սան-սարքերից ինքնահոս հավաքվում և հեռացվում է ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց: Այնուհետև միացնելով տարածքում նախատեսվող կեղտաջրերի մաքրման կայանին տոպաս-150: Ցանցերի համար նախատեսված են կոյուղու պլաստմասե խողովակներ մ200 փ50 մմ: Ցանցի վրա նախատեսված են դիտահորեր ստուգումներ կատարելու և հետագա շահագործման համար: Աշխատանքները իրականացնել տեղում փաստացի իրավիճակից ելնելով: նախագծային աշխատանքները կատարված են ՀՀ-ում գործող նորմերի և կանոնների համաձայն:

3.6 Էլեկտրատեխնիկական մաս

Նախագիծը մշակված է է գլխավոր ճարտարապետի առաջադրանքի, ինչպես նաև հարակից բաժիններից (ջեռուցում-օդափոխություն, ջրամատակարարում-կոյուղի) ստացված տվյալների հիման վրա: Նախագծի լուծումները համապատասխանում են ընթացիկ կարգավորող փաստաթղթերի պահանջներին - ПУЭ-հրատարակություն 6.7; СП-31-110-2003-Բնակելի և հասարակական շենքերում էլեկտրական կայանքների նախագծում և տեղադրում; СП52.13330.2011-Բնական և արհեստական լուսավորություն; ՀՀՇՆ 22-03-2017- Արհեստական և բնական լուսավորություն. Դպրոցի հաշվարկային հզորությունը-190կՎտ Նկուղային հարկի էլեկտրավահանային սենյակում նախատեսվում է տեղադրել՝ երկմուտքային ВРУ1(ІР) մակնիշի պահարան -DP1,DP2,DP3 բաշխիչ վահաններ -ապաստարանի կարիքների համար կՎԱ հզորության դիզել-գեներատոր Հարկերի խմբային վահանակները ինդեքսավորված են՝ -EP-նկուղային հարկի (ապաստարանի) վահանակներ -P- 1-3 հարկերի հիմնական վահանակներ -PV-օդափոխության վահաններ -PS-տեղային նշանակության վահանակներ (համակարգչային, տնարարություն, աշխատանքի ուսուցում, հանդիսությունների դահլիճ ,խոհանոց) -PL-կոմպլեկտ լաբորատոր վահանակներ (ֆիզիկայի և քիմյայի դասասենյակներ): Սնող մալուխներն էլեկտրավահանայինից մինչև խմբային վահանակներ կատարված են ВВГнг-LS հրակայուն մալուխներով և անցկացվում

մալուխատարներով և միջհարկային կանգնակներով: Մնող մալուխների, ինչպես նաև միջվահանակային կապերի տվյալները ամփոփված են մալուխային մատյանում: Ներքին ցանցերը մոնտաժվում են նույնպես BBΓԻՐ-LS մալուխներով, անցկացված՝ - մալուխատարների միջով միջանցքների երկայնքով - թաքնված է սվաղի շերտի մեջ: Անջատիչների և վարդակների մոնտաժման բարձրությունն է 1.8մ դասասենյակներում և միջանցքներում և 0.9մ-մյուս սենքերում: Դասասենյակների խմբային գծերը նախատեսված են խառը եղանակով (մեկական գիծ դասասենյակների համար): Խողովակներով հատակի մեջ ցանցեր են նախատեսված համակարգիչայինում (220Վ), ֆիզիկայի և քիմիայի դասասենյակներում (42Վ): 1 հարկի պահակակետից կատարվում է 1-3 հարկերի լուսավորության և ընդհանուր օդափոխության կենտրոնացված ղեկավարումը: Մյուս տարածքների (ապաստարան, խոհանոց, մարզա- և հանդիսությունների դահլիճներում) օդափոխության սարքավորումների ղեկավարումը կատարվում է տեղում: Նշված ագրեգատների միացմաները սխեմաները կատարված են ըստ BEHTC БКПФ կատալոգում բերված ներքին տերմինալների սխեմաների (անհամընկման դեպքերում միացումները կատարել համաձայն կոնկրետ սարքի անձնագրի): PV1 վահանում նախատեսված է տեղադրել ֆազերի հսկման ռելե և ավտոմատ անջատուման իրականացում հրդեհի դեպքում: Որպես լույսի հիմնական աղբյուր կիրարկված է 595x595մմ ունիվերսալ լուսադիոդային լուսատուներ 30Վտ հզորության միջանցքներում և 40Վտ դասասենյակներում: 30Վտ գծային LED լուսատուներ օգտագործված են նկուղային հարկում (ապաստարան), խոհանոցում, հանդիսությունների - և մարզադալիչներում (պաշտպանիչ ցանցով տարբերակ): Տանիքի ջրահեռացման համակարգի տերրերի (ջրհորդաններ, ուղղաձիգ ջ/խողովակներ) տաքացման համար 3 հարկի 2 թևերի P3 և P6 խմբային վահանակներում տեղադրվում են համապատասխան նոմինալների թողարկիչներ՝ ջերմակարգավորիչների միջոցով ավտոմատ ղեկավարումով: Թողարկիչներից դեպի տանիք անցկացվում են 5-ջիղային եռաֆազ մալուխներ, որոնցից մագիստրալ սխեմայով ճյուղավորիչ տուփերի միջոցով միացվում են բոլոր տաքացնող մալուխները: Տարածքի արտաքին լուսավորության համար

Էլեկտրավահանայինում տեղադրվում է ժամանակի- և ֆոտոռեզիստորով կոմպլեկտավորված վահանակ (POL): Վահանակից դեպի տարածք անցկացվում են 2 եռաֆազ մալուխագիծ, որոնցից մագիստրալ եղանակով միացված են ճարտարապետի առաջադրանքով տեղադրված սյուները: Բացի ավտոմատ ղեկավարմանը, նախատեսված է պահակակետից ձեռքով միացումը: Որպես էլեկտրական անվտանգության պաշտպանիչ միջոց՝ կիրարկված է TN-C-S համակարգը: Մատակարարման մալուխների PEN ջիղերը միացվում են գլխավոր վահանի PE ձողին, որը իր հերթին հողանցվում է բակում նախատեսվող 6-էլեկտրոդային կոնտուրի վրա: Վահանի կորպուսից մեկուսացված աշխատանքային զրոյի N հաղորդաձողը միջակայի միջոցով միացվում PE ձողին: Համաձայն PД 34.21.122-87 (աղյուս.1.կետ 14) և СО153- 34.21.122-2003 (կետ 3.2.1.2) դպրոցի շենքը չի պատկանում շանթապաշտպանության հատուկ միջոցներ պահանջող կառույցներին: Տանիքում տեղադրվող ֆոտոռեզիստորային պանելների կայծաքի ուղիղ հարվածից պաշտպանումը՝ վերջինների հենարանային կոնստրուկցիաների հողանցումով դիդարկված է նախագծի համապատասխան բաժնում:

3.7 Հրդեհային ազդարարում

Ավտոմատ հրդեհային և ազդարարման նախագիծը կատարված է գոյություն ունեցող հրդեհային տեխնիկայի նորմերի և կանոնների / հճՌկ 2.04.09-84, հճՀՐ II-8.04.02-2005/ և տեխնիկական միջոցների ընտրման և կիրառման առաջարկների հիման վրա: Ավտոմատ հրդեհային համակարգը նախատեսված է հսկվող շինություններում հրդեհի հայտնաբերման և համապատասխան ծառայություն տեղեկացման համար: Որպես ավտոմատ հրդեհային ազդասարքերի ընդունող-հսկիչ սարք օգտագործվում է СИГНАЛ-20, ղեկավարման-հսկման հ2000-Ծ վահան, որոնք գտնվում են ձեղնահարկում գործավարի սենյակում: Որպես ավտոմատ հրդեհային ազդասարքերի վերջնասարքեր օգտագործվում են Լկ-212-46 ծխային և ձեռքի ԼկՀ-513 մականիշի տվիչներ: Ծխային տվիչներ տեղադրվում են արաստաղի վրա: Հրդեհային ազդարարման համար տեղադրվում են ձայնային ազդարար

ACTPA-10M, որը տեղադրվում է մուտքերի մոտ և միջանցքներում: Ավտոմատ հրդեհային ցանցերը կատարվում են ԽՈՒՄԻՄ2x0,5, ԽՈՒՄՎՂ 2x0,75 մակնիշի մալուխով ՊԽՎ խողովակների մեջ կամ կաբել-անցուղիների մեջ:

Սարքերի մոնտաժը և ավտոմատ միջոցների անցկացումը կատարվում է միացման և դասավորության սխեմաների հիման վրա: Հոդանցում է կատարված է համաձայն ПУЭ և BCH296-81, հծՌկ 3.05.07-85:

Համակարգը սնվում է հոսանքի պահուստային աղբյուրներով, որոնք 220 Վ սնուցման բացակայության դեպքում ապահովում են համակարգի 24 ժամյա անխափան սնուցում, մարտկոցների հաշվին:

Համակարգը համալրված է GSM-9N մոդեմով, որի միջոցով տազնապի ազդանշանը անմիջապես փոխանցվում է ԱԻՆ ՃԿԿ 911 մոնիտորինգային համակարգին: Տազնապի ազդանշանը անմիջապես փոխանցվում է ԱԻՆ ՃԿԿ 911 կապի հնարավոր միջոցներով (Internet / Ezernet/GSM/ GPRS/ հեռախոսային ֆիկսված ցանցով): Մոնիտորինգային կենտրոնում էլեկտրոնային քարտեզի վրա անմիջապես արտացոլվում է օբյեկտը իր բոլոր տեղեկատվությամբ:

Համակարգի տեղակայման ընթացքում թույլատրվում է այլ համանման սարքերի և նյութերի կիրառում, որոնք չեն վաթարացնում ընդհանուր համակարգի տեխնիկականը սպառողական բնութագրերը:

Նախագծում կիրառված սարքավորումների տիպերը կարող են փոխվել ապահովելով նրանց տեխնիկական պարամետրերը:

3.8 Տեսահսկման համակարգ

Նախագծում նախատեսված է տեսահսկման համակարգ, որի օգնությամբ կատարվում է շենքերի ներքին և արտաքին հսկողությունը:

Տեսահսկումն իրականացվում է ներքին օր/գիշեր CTV-HDD մակնիշի և արտաքին օր/գիշեր CTV-HDB մակնիշի տեսախցիկներով, որոնք տեղադրվում են ըստ նախագծի:

Բոլոր տեսախցիկները միացվում են CTV-HD9216 AP Plus մակնիշի տեսառեգիստորին 16 տեսախցիկների համար, որը տեղադրվում է + 0.000 նիշում :

Տեսառեգիստորի օգնությամբ տեսանկարը հաղորդվում է մոնիտորի 24" վրա, նաև կատարվում է 7x24 ժամ տեսագրում:

Տեսահսկման համակարգի բաշխիչ ցանցերը կատարվում են CCTV 4*0.22 +1 մակնիշի մալուխով, որը տեղադրվում են ПХВ խողովակի մեջ սվաղի տակ, կամ կաբել- անցուղիների մեջ:

3.9 Արևային ֆոտովոլտային համակարգ

Նախագիծը մշակված է դպրոցի շինության տանիքի մի մասի և հողատարածքի վրա ֆոտովոլտային կայանքների նախագծա-նախահաշվային աշխատանքների շրջանակներում ֆոտովոլտային համակարգերի նախագծման ներկայացված առաջադրանքների հիման վրա:

171.6կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանը, որը տեղադրվելու է Հայաստանի Հանրապետության Գեղարքի կրթահալիի տարածքում կազմված է հետևյալ հիմնական սարքավորումներից.

1. Ֆոտովոլտային վահանակներ - 550Վտ անվանական հզորությամբ՝ թվով 312 հատ ընդհանուր 171600Վտ դրվածքային հզորությամբ, որոնք պետք է ունենան հետևյալ նվազագույն տեխնիկական պարամետրերը. Օգտակար գործողության գործակիցը 19%, աշխատանքային ջերմաստիճանը $-40...+85^{\circ}\text{C}$, ջերմաստիճանային գործակիցները $I/SC(\%/^{\circ}\text{C}) < 0.04 \pm 0.015$, $P/\max(\%/^{\circ}\text{C}) < 0.43 \pm 0.05$, $V/OC(\%/^{\circ}\text{C}) < 0.325 \pm 0.1$, անվտանգության չափանիշներ IEC61625, IEC61730, ISO9001:2015, ISO14001:2015, ISO45001:2015 և այն:

2. Փոխակերպիչ - թվով 2 հատ, որը պետք է բավարարի հետևյալ նվազագույն տեխնիկական պարամետրերին. IP65, եռաֆազ 80կՎտ և 90կՎտ հզորությամբ, մուտքային (MPPT) առավելագույն լարումը 1000Վ, մուտքերի (MPPT) քանակը՝ առնվազն 2 հատ, մուտքերի աշխատանքային լարման տիրույթը ներառյալ 80-950Վ, ելքային լարումը՝ 220/380Վ, հաճախությունը 50Հց, ցանցին միացման տեսակը՝ եռաֆազ, նվազագույն օգտակար գործողության գործակիցը 98.3%, անվտանգության չափանիշները IEC կամ դրան համարժեք միջազգային (IEC62109, IEC61727, IEC62116, IEC61000, IEC61683, IEC60068-3), աշխատանքային

ջերմաստիճանը $-25...+60^{\circ}\text{C}$, հզորության գործակիցը $-0.8...0.8$, հոսանքի հարմոնիկ տատանման շեղումը 3.5%: Փոխակերպիչները պետք է ունենան համացանցին միանալու և տվյալների փոխանցման հնարավորություն: Փոխակերպիչները պետք է ունենան ներկառուցված առանձին մուտքերի հաստատուն հոսանքի ապահովիչներ, հաստատուն հոսանքի իմպուլսային գերլարվածության պաշտպանիչ սարք (SPD) և խզիչ: Բացի ներկառուցված պաշտպանիչ սարքավորումներից պետք է մոնտաժել նաև արտաքին նույն պաշտպանության սարքավորումներ՝ բաժանիչներ և ապահովիչներ, որոնց պարամետրերը պետք է ընտրել ելնելով արևային վահանակների և փոխակերպիչի տեխնիկական պարամետրերից:

Կառուցվող արևային կայանը կազմված է չորս շարքերից, յուրաքանչյուր շարքն էլ իր հերթին բաղկացած է հաջորդաբար միացված 11-ական ֆոտովոլտային վահանակներից: Յուրաքանչյուր շարքի ֆոտովոլտային վահանակները միացվում են հաջորդաբար՝ կազմելով չորս խումբ, որն էլ հաստատուն հոսանքի PF-1 $1\times 4\text{մ}^2/$ պղնձյա հաղորդալարով միանում են փոխակերպիչին:

Փոխակերպիչին կից՝ առանձին արկղում պետք է մոնտաժել

1. Փոփոխական հոսանքի եռաֆազ $I/n=160\text{Ա}$ քառաբևեռ ավտոմատ անջատիչ կարճ միացումներից և գերբեռնվածություններից պաշտպանության համար

2. Փոփոխական հոսանքի իմպուլսային գերլարվածություններից պաշտպանության սարք (4P SPD)

3. Փոփոխական հոսանքի եռաֆազ քառաբևեռ դիֆերենցիալ պաշտպանության ավտոմատ անջատիչ (4P 100mA)

Էլեկտրամատակարարումը շարունակվում է BBF-1 ($4\times 95\text{մ}^2/$) մալուխային գծով դեպի շենքի տեխնիկական սենյակ՝ 1-ին հարկում նոր տեղադրվող 0.4կՎ լարման բաշխիչ վահան, որի սնուցումն իրականացվում է շենքի գոյություն ունեցող 0.4կՎ լարման արկղից BBF-1 ($5\times 4\text{մ}^2/$) մալուխով, որն էլ իր հերթին սնուցվում է շենքի գոյություն ունեցող 0.4կՎ լարման վահանակից BBF-1 ($4\times 4\text{մ}^2/$) մալուխով:

1-ին մուտքում անհրաժեշտ է տեղադրել 1 արկղ, որոնց մեջ մոնտաժվում են.

N1 արկղում ($600\times 400\times 250\text{մմ}$)՝

1. Փոփոխական հոսանքի եռաֆազ I/n=160Ա քառաբևեռ ավտոմատ անջատիչ կարճ միացումներից և գերբեռնումներից պաշտպանության համար

2. Եռաֆազ հոսանքի երկկողմանի հաշվառքի սարք, դեպի ցանց և ցանցից դեպի սպառիչներ էլեկտրաէներգիայի մուտքի և ելքի հաշվառման համար, որը պետք է լինի ստուգաչափված և բավարարի ՀՀ նորմատիվ ակտերին:

Անհրաժեշտ է նաև շենքի տեխնիկական սենյակում տեղադրել (400x300x160մմ) արկղ, որում պետք է տեղադրել փոփոխական հոսանքի եռաֆազ I/n=25Ա եռաբևեռ ավտոմատ անջատիչ արևային կայանը ցանցին միացնելու համար:

Արևային ֆոտովոլտային կայանի հողանցումն իրականացվում է նոր կառուցվող հողանցման կոնտուրից՝ բնահողում տեղադրված 8 հատ 50x50x5մմ անկյունակներից և շերտապողպատից, որոնք պետք է լինեն ցինկապատված:

Փոփոխական հոսանքի բաշխիչ արկղը հողանցվում է ՊԵ 1x16մմ²/ պղնձյա մալուխի միջոցով: Փոխակերպիչի մետաղական իրանի հողանցումն իրականացվում է առանձին մոնտաժվող ՊԵ 1x16մմ²/ մալուխի միջոցով: Ֆոտովոլտային վահանակի մետաղական իրանները հողանցվում են առանձին մոնտաժվող ՊԵ 1x4մմ²/ պղնձյա մալուխի միջոցով:

Տեղակայվող հողանցիչների հողանցման դիմադրությունը պետք է լինի ≤ 4 Օհմ:

Նախագծում նշված հողանցման էլեկտրոդների քանակության 4 Օհմ դիմադրություն չափահավելու դեպքում անհրաժեշտ է ավելացնել այնքան էլեկտրոդ, մինչև ապահովվի 4 Օհմ դիմադրությունը: Հողանցիչի համար կիրառվող դետալները ու հանգույցները համապատասխանում են գործող տեխնիկական պահանջներին:

Հողանցման սարքվածքի հորիզոնական հատվածի խորությունը հողի տակ պետք է լինի 0.5մ-ից ոչ պակաս: Հողանցիչ հաղորդիչը պետք է ունենա հնարավոր ամենակարճ երկարություն և նվազագույն թեքումներ, անցկացնել առանց կտրուկ թեքումների (թեքման շառավիղը պետք է լինի 0.3մ-ից ոչ պակաս):

Բոլոր էլեկտրամոնտաժային աշխատանքները կատարել ըստ գործող նորմերի СНиП 3.05.06-85, ПУЭ ինչպես նաև ՀՀ ստանդարտ ՀՍ335-2011 <<Արևային լուսաէլեկտրակայան կայանքներ միացումը էլեկտրաէներգետիկական համակարգի ընդհանուր նշանակության էլեկտրական ցանցի դրույթներին>>:

Նախագծի տվյալ մասով մշակվում է դպրոցի շենքի տանիքում և հողատարածքի վրա կառուցվող արևային ֆոտովոլտային կայանի կոնստրուկցիաները: Արևային ֆոտովոլտային կայանն իր կազմում ընդգրկում է շենքի տանիքում տեղադրվող 17600Վտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կոնստրուկցիաների տեղադրումը վերնածածկի վրա, ինչպես նաև վերջինիս համար հիմք հանդիսացող ալյումինե կոնստրուկցիաները: Ալյումինե կոնստրուկցիաները տեղադրվում են ծածկի ցինկապատ թիթեղի կրող կոնստրուկցիաների վրա՝ խարսխվելով վերջիններիս հետ: Սույն նախագծով մշակվել են նաև համակարգի կրող կոնստրուկցիաները, որոնք պատրաստված են անողացված ալյումինից և լինում են լրակազմ:

Արևային ֆոտովոլտային կայանի կրող կոնստրուկցիաները մատակարարվում են որպես պատրաստի շինվածք և պետք է բավարարեն 28մ/վ քամու արագության և 65կգ/մ²/ ձյան նորմատիվային բեռնվածքի պայմաններում 25 տարի անխափան շահագործման համար: Մոնտաժման ընթացքում խուսափել դրանց մեխանիկական վնասվածքներիվ և լրամշակումներից (նոր անցքերի բացում, հղկում, նախամշակված էլեմենտների կտրում և այն): Կրող ալյումինե կոնստրուկցիաները տեղադրվում են տանիքի ծածկի վրա՝ անկյունը որոշվում է տանիքի լանջի անկյունին համապատասխան:

Կոնստրուկցիաների տեղակայման համար, շենքի ցինկապատ թիթեղավոր ծածկի վրա ավրացվում են ներդիր հենակներ: Ներդիր հենակները ամրակապվում են տանիքի կավարամածին համապատասխան երկարության պտուտակաձողերով:

Պտուտակաձողերի մոնտաժման համար անհրաժեշտությունից էլնելով բացել անցքեր ծածկի ցինկապատ թիթեղավոր լանջի վրա անհրաժեշտ

քանակությամբ, ավարտել մոնտաժային աշխատանքները և վերականգնել վնասված հատվածը:

Նոր մոնտաժվող ներդիր հենակների կոնստրուկցիաների նախագծային ամրության ձեռքբերումից հետո վերականգնել վնասված հատվածի ջրամեկուսացումը պոլիմերաբիտումային ջրամեկուսիչ երկշերտ իզոգամով: Ջրամեկուսացումն իրականացնելուց վնասված հատվածի սահմանները մեծացնել 150մմ-ով:

3.10 Ջեռուցում, օդափոխություն մաս

Ջեռուցում

Որպես ջեռուցիչ սարք ընդունված են ալյումինե բարձրորակ մարտկոցներ-129կկալ/ժ, $N_{\text{սեկ.}}=0.150$ կվտ/ժ: Նախատեսնված է ներքին մատակարարումով, երկխողովականի, փակուղային համակարգ: Օբյեկտի համար հաշվարկային արտաքին՝ $T_{\text{U}}=-19^{\circ}\text{C}$: Ջերմատարը ջուր է $T_1-T_2=80^{\circ}\text{C}-60^{\circ}\text{C}$: Բոլոր սարքերի արբերիչները $\Phi 20 \times 3,4$ են: Սույն նախագծով նախատեսնված է սարքերի տեղադրում ըստ ջերմային հաշվարկի: Ջերմային սնուցումը նախատեսնված է նախատեսնվող կաթսայատանից:

Օդը համակարգից հեռացվում է ջեռուցման սարքի վրա և կանգնակների վերջում տեղադրված օդային փականներով, ինչպես նաև մանսկու փականներով: Ճյուղավորումների վրա տեղադրվում են պոլիպրոպիլենային փականներ և եռաբաշխիկներ:

Բոլոր սարքերի արբերիչների վրա տեղադրվում են ջերմակարգավորիչ փականներ: Մայրուղագծերը անցկացվում են $i=0.003$ թեքությամբ հատակի վրայով, իսկ դռների հետ հատվող մասերում-հատակի տակով, մեկուսացված:

Օդափոխություն

Համաձայն գործող նորմերի և կանոնների օբյեկտում նախատեսնված է օդի ներածման և արտածման համակարգեր մեխանիկական դրդմամբ հանդեսի դահլիճում արտասահմանյան ռեկուպերատորի կիրառմամբ: Վերոհիշյալ համակարգում արտածումն իրականացվում է արհեստական եղանակով, որի օդը

մտնում է ռեկուպերատորային ագրեգատ, տաքացնում է ներածվող օդը խառնման միջոցով, այնուհետև դուրս է մղվում արտաքին միջավայր:

Ռեկուպերատորների տեղադրումից առաջ անհրաժեշտ է ունենալ սերտիֆիկատը և համաձայնեցումը պատվիրատուի և նախագծողի միջև:

Վերոհիշյալ շինությունների ներածման օդատաքացուցիչ սարքավորումները ջերմային տաքացմամբ են:

Բոլոր օդատարները տեղադրվում են առաստաղի տակ, կեղծ առաստաղի մեջ: Ձեղնահարկում տեղադրվող բոլոր օդատարները մեկուսացվում են հանքային բամբակով:

Օդի ներածման և արտածման համար օգտագործված են 1.494.-10 կարգավորվող ճաղավանդակներ: Օդի ներածման լավորակման կոնդիցիոներներ են նախատեսված համակարգիչների, տնօրենի տեղակալի և ուսուցիչների սենյակներում:

Նախատեսված են քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության դասարաններում քարշիչ պահարաններ:

Սանհանգույցներից, դասարաններից օդի արտածումն իրականացվում է բնական եղանակով:

Օդի ներածման լավորակման համակարգերը հաշվարկված են.
1.հանդիսադահլիճի համար-20խոր.մ յուրաքանչյուր տեղի համար.
2.մարզադահլիճի համար նախատեսված է 80խոր. մ 1- մարզիկի համար:
3.ուսումնական կաբինետներում ըստ նորմերի տրվում է օդի ներածում 16.0խոր.մ յուրաքանչյուր աշակերտի համար:

Նկուղային և վերին հարկերում օդափոխությունը իրականացվում է գլանային ռեկուպերատորներով:

3.11 Ջերմամեխանիկական մաս

Կաթսայատան աշխատանքային նախագիծը մշակված է նախագծային առաջադրանքի հիման վրա, համաձայն (հծՌկ II-35-76): Ջերմության հաշվարկային ծախսը կազմում է՝ $Q_{\Sigma}=459599.0$ կկալ/ժամ 534,42:

Նախատեսված օբյեկտի տարածքի կաթսայատանից արտաքին ջերմացանցը բերվում է սպորտ դահլիճի 1-ին հարկ և ուսումնական մասնաշենքի նկուղի հարկ: Կաթսաները համալրված են ավտոմատացված կառավարման այրիչներով:

Քանի որ, $534.42 \times 1.1 \times 0.7 = 411.5$ կվտ/ժամ, կաթսայատանը տեղադրում ենք 2 կաթսա ECOMAX N 40 Q1 = 400000,0/363500.0 կկալ/ժ, / N=465/423 կվտ/, կամ այլ մոդելի, ինչպես նաև 1 կաթսա տաք ջրամատակարարման համար N=74/81 կվտ հզորությամբ: Որպես հիմնական վառելիք ընդունված է բնական գազ-104.3 խոր.մ. չափով: Ջերմատարը ջուր է T1- T2=800/ -600/°C:

Կաթսայատան գազամատակարարումը նախատեսված է շենքի մոտով անցնող արտաքին ցանցից, որի երկարությունը հաշվի է առնված ծավալում:

Կաթսայատանը տեղադրվում է 2 կաթսա յուրաքանչյուրը N=465/423 կվտ և 1 կաթսա--74 կվտ արտադրողականությամբ :

Կաթսան աշխատում է գազով:

Գազի ծախսը կաթսայատան համար կլինի՝

$$B = Q/QH \times 800000/8250 \times 0.93 = 104.3 \text{ մ}^3/\text{ժամ}$$

ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Արտածվող օդի ծավալը՝ $V_w = V_k \times 3 = 103.68 \times 3 = 311.04 \text{ մ}^3/\text{ժամ}$:

Օդափոխիչ օդատարի կենդանի կտրվածքը կլինի՝

$$F = V_w / 3600 \times W = 311.04 / 3600 \times 1.0 = 0.086 \text{ մ}^2/$$

Օդի արտածման համար տեղադրված են են դեֆլեկտորներ «ԼԱԴՄ-N4» d=300:

Ներածվող օդի քանակությունը կլինի՝

$$V_{\text{ներ}} = V_{\text{այր}} + V_w = 104.3 \times 10 \times 1.2 + 311.04 = 1538.1 \text{ մ}^3/\text{ժամ}$$

Օդի ներածման համար տեղադրվում է ժալյուզային ցանց՝

$$F_{\text{ժ.ց}} = V_{\text{ներ}} / 3600 \times V_o = 1538.1 / 3600 \times 1.0 = 0.43 \text{ մ}^2/$$

Տեղադրման համար ընդունում ենք ժալյուզային ցանց 1200x400(h) չափսով-
1 հատ:

3.12 Գազամատակարարում

Կաթսայատան գազամատակարարումը նախատեսված է համաձայն տեխնիկական պայմանի շենքից 50 մետր հեռավորությամբ անցնող Փ57մմ մ/Ճ վ/գ գազատարից ներմիացմամբ:

Դպրոցի ջերմամատակարարման համակարգի կաթսաների գազամատակարարման ներքին ցանցի նախագիծն իրականացված է Հ.Հ. օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, նախագծման նորմերին և կանոններին, ինչպես նաև նախագծային առաջադրանքին համապատասխան:

Նախագծով նախատեսվում է ջերմային հանգույցում տեղադրել 2 կաթսա յուրաքանչյուրը N=465/423կվտ եվ 1 կաթսա--74կվտ արտադրողականությամբ:

Գազի մաքսիմալ ծախսը կազմում է 104.3 մ³/ժամ:

Գազամատակարարման համար օգտագործվում են պողպատյա ջրագազատար խողովակներ:

Կոռոզիայից պաշտպանելու համար խողովակները յուղաներկել 2 անգամ:

Կաթսաների գազամատակարարման համակարգի անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով նախատեսվում է տեղադրել այրվող գազերի ազդանշանային սարք (դետեկտոր):

Ազդանշանման համար սահմանված չափանիշները գերազանցելու դեպքում դետեկտորը տալիս է լուսա-ձայնային ազդանշան: Գազի մուտքագծի մոտ դրսից տեղադրված է էլեկտրամագնիսական կափույր, որը վթարային իրավիճակում դետեկտորից ստանալով հաստատուն ելքային իմպուլսներ՝ դադարեցնում է գազի մատակարարումը կաթսաներին:

Փորձարկումից առաջ խողովակները պետք է ենթարկվեն փչամաքրման:

Անհրաժեշտ է գազատարը փորձարկել պնևմատիկորեն՝ ամրությունը և կիպությունը ստուգելու համար:

Հավաքակցումը, փորձարկումը, շահագործման հանձնումը և շահագործումը կատարել համապատասխան գործող նորմերի և կանոնների:

- ՀՀՇՆ IV-12.03.01-04:

- Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում

3.13 Տրանսֆորմատորային ենթակայան

Նախագիծը կատարված է համաձայն գլխավոր ճարտարապետի առաջադրանքի:

Դպրոցի տարածքում նախագծված է 1x250կՎԱ հզորության 10/0.4կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայան, որի սնուցումը կատարվում է համաձայն տեխնիկական պայմանների:

Ենթակայանի 10 կՎ լարման կողմը նախագծված է KCO-393 մակնիշի բջիջների հիման վրա: Բջիջները դասավորված են մեկ շարքով:

Ենթակայանի 0.4 կՎ վահանը նախագծված է ИСО-70-1 մակնիշի պանելների հիման վրա: Պանելների նույնպես դասավորված են մեկ շարքով: 0.4կՎ վահանը պարունակում է տարբեր նոմինալ հոսանքների թվով 10 հատ ֆիդերային ավտոմատ անջատիչ:

Կիրարկված են ТМГ-250 կՎԱ յուղային տրանսֆորմատոր, որի 10կՎ սնուցումը մալուխային է, իսկ 0.4կՎ ելքը-հաղորդաձողային:

Որպես հողանցման համակարգ ընդունված է TN-C-S -տրանսֆորմատորի PEN ջիղը ենթակայանում չի բաժանվում:

Ենթակայանի հողանցման համակարգը ընդունված է ընդհանուր 10 և 0.4կՎ լարումների համար:

Արտաքին կոնտուրը կառուցվում է ենթակայանի-կաթսայատան ընդհանուր կառույցի շուրջ՝ արտաքին պատերից 0.75-1.1մ հեռավորության վրա: Նախատեսված է վերջինիս միացումը ենթակայանի ներքին կոնտուրին 2 կետում և ներանցում դեպի կաթսայատուն վերջինիս ներքին կոնտուրին միանալու նպատակով:

Ներքին լուսավորության համար օգտագործված են առաստաղային LED լուսատուներ 18 Վտ հզորության:

3.14 Շինարարության կազմակերպում

Նախագծով նախատեսված է շին. աշխատանքների կազմակերպումը իրականացնել երկու փուլով՝ նախապատրաստական և հիմնական:

Նախապատրաստական փուլում կատարվում են.

- շին.հրապարակի ժամանակավոր ցանկապատում,
- ժամանակավոր էլեկտրամատակարարում և ջրամատակարարում,
- շին.նյութերի ընդունման հարթակների պատրաստում,
- շին.հրապարակի գիշերային լուսավորվածություն,
- կենցաղային, գրասենյակային ժամանակավոր շինության տեղադրում,
- շին. մեքենաների լվացման կետի տեղադրում,
- տեղեկատվական ցուցանակի տեղադրում (շինությունների եռաչափ պատկերով):

Հիմնական փուլում կատարվում են նախագծով նախատեսված կառուցման աշխատանքները:

Նախագծի շինարարության կազմակերպում մասը կատարված է համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի և գործող շին. նորմերին ու կանոններին համապատասխան:

Շինարարական հրապարակի մոբիլիզցիայի և նախապատրաստման փուլում կիրականացվի տարածքի ժամանակավոր ցանկապատում, ցանկապատի վրա կտեղադրվի ժամանակավոր լուսավորություն և ցանկապատին կամրացվի պաստառ համապատասխան գրություններով: Շինարարության կազմակերպման նախագծին համապատասխան նշված տեղերում կտեղադրվեն վագոն-տնակներ և ժամանակավոր պատրաստի զուգարան-խցիկ աշխատողների համար:

Գոյություն ունեցող շինության ապամոնտաժման աշխատանքներին խանգարող բոլոր կոմունիկացիոն գծերը կանջատվեն նախապես:

Համապատասխան տեղերից կանխավ կանջատվեն մասնաշենքը սնուցող էլեկտրական լարերը:

Շին. հրապարակում լինելու են.

- ավտոմեքենաների, մեխանիզմների կայանման, առասանման ճոպանների տեղակայման վայրեր,
- պահակատուն -1 հատ,
- փակ պահեստ՝ շինանյութի համար,
- լվացարան-ցնցուղարան,
- շինարարական նյութերի, գործիքների պահեստներ, բացօթյա պահեստ,
- աշխատողների համար ժամանակավոր շինություններ՝ գրասենյակ, հանդերձարան, սննդի ընդունման կետ՝ ճաշարան, լվացարան- ցնցուղարան, պատրաստի 1*1,5 չափերի զուգարանախցիկ/բիոզուգարան՝ լվացարանով/- 1 հատ,
- շինհրապարակում լինելու է նաև 1 հատ 7,30x3 մ չափերի ավտոմեքենաների անիվների լվացման հարթակ, ինչպես նաև հետադարձ ջրամատակարարումով պոմպ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող բիոզուգարան: Իսկ անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 100մ³ չափերի պարզարան: Պարզարանում տեղի է ունենալու մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ արտադրական հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադժ:
- Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ և լուսային ազդանշանային համակարգով:

Շինարարության ժամանակ նախատեսվող ժամանակավոր պահեստներն, ինչպես նաև աշխատողների համար նախատեսվող ճաշարանը, հանդերձարանը, գրասենյակը, պահակատունը տեղադրվելու են տարածքում՝ ժամանակավոր վազոն տնակներում:

Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր մետաղաթիթեղով ցանկապատի միջոցով: Տեղադրվելու է 5,0մ լայնությամբ 2 դարպաս: Պարսպի արտաքին մասում տեղադրվելու է տեղեկատվական պաստառ: Շինհրապարակն

ապահովված է լինելու՝ հակահրդեհային վահանակով, կենցաղային աղբամաններով, էլեկտրականությամբ, գիշերային լուսավորությամբ՝ 2 լյուքսից ոչ պակաս: Շինհրապարակում նախատեսված է քանդած շինանյութի կուտակման, գտած շինանյութի տեղադրման, ինչպես նաև շինարարական աղբի կուտակման տարածքներ: Բոլոր տիպի շին-մոնտաժային աշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները: Ելնելով առկա պայմաններից շինարարության փուլում նախատեսվում են անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ, հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ: Շինարարական նյութերը պահեստավորվելու են շինհրապարակում:

3.15 Հողային աշխատանքներ

Կառուցապատման ժամանակ կատարվելու է 14826.0մ³ ծավալի հողային աշխատանքներ՝ հանույթ, որից ետ լիցք՝ 7908.0մ³: Ավելացած 6918.0մ³ ծավալով հողային զանգվածն օգտագործվելու է տարածքի հարթեցման համար, քանի որ տարածքում առկա են ռելիեֆի անհարթություններ: Տարածքում առկա ռելիեֆի անհարթությունների հարթեցման համար իրականացվելու է գրունտների լիցք՝ 13279.2մ³ ծավալով, ուստի պակասող 6361.2մ³ (13279.2-6918.0=6361.2) ծավալով հողային զանգվածն է բերվելու է համայնքի կողմից հատկացված վայրից:

Հողային զանգվածն առաջանալու է մասնաշենքերի հիմքերի փորման, ներտարածքային ճանապարհների կառուցման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: Հողային աշխատանքները կատարվելու են մեքենա-մեխանիզմներով և ձեռքի կտրող, հատող ժամանակակից գործիքներով: Յուրաքանչյուր 50սմ հաստությամբ շերտով ետլիցքից հետո կատարվելու է գրունտի չոր և թաց տոփանում: Հողային և հիմնային, տանիքի, հատակների հարդարման, ինչպես նաև լրող և պատող կոնստրուկցիաների շին. մոնտաժային

աշխատանքները կատարվելու են համաձայն աշխատանքային նախագծի՝ ՇՆուԿ 3.02.02.-87-ի և ՇՆուԿ III-4-81-ի պահանջներին համապատասխան:

Համաձայն կատարված ինժեներական և ռադիոտեխնիկական լուսումնասիրությունների՝ բուն դպրոցի տարածքում հողաբուսական շերտի հզորությունը կազմում է 0.20սմ: Հանման ենթակա բուսահողի ծավալը կազմում է առավելագույնը 897.35մ³, որը ժամանակավոր կուտակվելու է շին. հրապարակում, այնուհետև օգտագործվելու է խախտված տարածքների վերականգնման և բարեկարգման նպատակով:

3.16 Աղբի հեռացում

Քանդման արդյունքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ, խիստ մոտարկված հաշվարկներով մոտ 17500.0մ³ շինաղբի տեսքով, որը պարբերաբար տեղափոխվելու է համայնքապետարանի կողմից հատկացված վայր: Շինարարության ընթացքում առաջանալու են շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով՝ մոտ 230մ³ ծավալով: Շինաղբի կուտակումը կատարվելու է շինհրապարակում նախատեսված վայրում՝ պարկերի մեջ, չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Կատարվելու է քանդման արդյունքում առաջացած թափոնների տեսակավորում:

Առանձնացված թափոնները/մասնավորապես ասբեստյա/ կտեղափոխվեն (կհանձնվեն) համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին լիցենզիայով թույլատրված վայրում տեղադրելու նպատակով:

Կենցաղային աղբը կառուցապատման փուլում կազմելու է 5400կգ/տարի: Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են 1.5*1 չափերի 2 աղբարկղ: Շինարարության փուլում աղբահեռացումը կարգավորվելու է շինթույլտվությամբ սահմանված պահանջին համապատասխան:

3.17 Բարեկարգում և Կանաչապատում

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Բարեկարգումը կատարվելու է սալիկներով, սալվածքների, թեքահարթակներ, եզրաքարերի տեղադրմամբ: Կանաչապատման աշխատանքներն աշխատանքներն իրականացվելու են համաձայն Կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման դրույթներով:

Տնկվող ծառերի քանակ՝ 134 հատ /ուռենի-2, հացենի-27, եղևնի-11, գլխի-41, ակացիա-22, թելի-31/: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ՝ համաձայն համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի (Կանաչապատման նախագիծը ներկայացվել է Գառնի համայնքապետարանի համաձայնեցմանը):

3.18 Շինարարության իրականացման ժամանակացույցը

Աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմվելու է 2,3 տարի կամ 28 ամիս: Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II հիման վրա, հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը:

3.19 Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր

Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են հետևյալ նյութերը՝ երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ, կախովի ցեմենտի պանելներ, ֆիբրոցեմենտ, փայտ, մետաղ, մետաղական կառուցվածքներ, ամրանային ձողեր, բարձրորակ երեսապատման սալիկներ, տուֆ, ապակի, բարձրորակ սվաղ և ներկ:

Կառույցի երեսապատումը նախատեսվում է իրականացնել մուգ մոխրագույն, դարչնագույն ֆիբրոցեմենտային պանելներով՝ քարե շարվածքի նմանակմամբ: Պատուհանները լինելու են ալյումինե, ջերմամեկուսիչ կամրջակով,

երկշերտ ապակեփաթեթով: Աստիճանները՝ երեսապատվելու են բազալտե սալիկներով, հատակը մետախային խեցեսալիկներով:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախնուրդի պատրաստում չի նախատեսվում: Օգտագործվելու է B12.5 և B25 մակնիշի բետոն, որը պատվիրվելու է մասնագիտացված բետոնային հանգույցներում: Բետոնը շինհրապարակում լցվելու է կաղապարների մեջ բետոնամղիչով: Բետոնախառնիչ մեքենայի սպասարկումը և լվացումը իրականացվելու է շինարարական հրապարակից դուրս, այդ նպատակով նախատեսված հատուկ տարածքում:

Շինաշխատանքերը կատարվելու են մասնագիտացված կապալառու կազմակերպությունների կողմից: Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպություններից՝ ձեռնարկություններից և գլխավոր շինարարական կազմակերպության արտադրական բազայից:

Շինարարական հրապարակում շինանյութերը պահեստավորվելու են պահեստներում, իսկ բաց տարածքի դեպքում կտեղադրվեն տակդիրների վրա՝ նորմերով նախատեսված բարձրությամբ: Սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

Դպրոցական շենքի կառուցման շինարարության և շահագործման փուլում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր, ինչպես նաև շահագործման փուլում՝ բնական գազ:

Ջրօգտագործում

Շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի (գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար: Սառը ջրի սնուցումը կատարվում է քաղաքային ջրմուղի մ125մմ ցանցից մ 50մմ խողովակով, որի վրա համապատասխան հորում տեղադրվելու է եռաբաշխիչ և հաշվիչ:

Ջրցանի համար տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Պայմանագիրը կկնքվի Կապալառու կազմակերպության կողմից տեխնիկական ջուր մատակարարող կազմակերպության կամ անձի հետ, որն ունի համապատասխան լիցենզիա: Պայմանագրում կհստակեցվի նաև ջրառի կետը: Տեխնիկական ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 5տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար:

Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U1 = S1 \times K1 \times T, \text{ որտեղ՝}$$

$$S1 = 4050 \text{ մ}^2 \text{ (ջրվող տարածքի մակերես)}$$

$$K1 = 0.0015 \text{ մ}^3/\text{օր}/\text{մ}^2 \text{ (1 մ}^2\text{-ի ջրցանի նորմատիվ)}$$

$$T = 250 \text{ օր (ջրցանի ժամանակահատված, ներառյալ կրկնակի ջրցանը)}$$

Օրական միջին ջրածախսը՝

$$U1 = 4050 \times 0.0015 \times 250 = 1518,75 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0,375 \text{ մ}^3/\text{օր:}$$

Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$W\ddot{E}.i. = (n \times N + n1 \times N1) \times T, \text{ որտեղ}$$

$$n = 5 \text{ (ԻՏ աշխատողների թիվ)}$$

$$N = 0.016 \text{ մ}^3/\text{օր}/\text{մարդ (ԻՏԱ ջրածախսի նորմատիվ)}$$

$$n1 = 40 \text{ (սպասարկող աշխատողների թիվ)}$$

$$N1 = 0.025 \text{ մ}^3/\text{օր}/\text{մարդ (սպասարկողների ջրածախսի նորմատիվ)}$$

$$T = 728 \text{ (աշխատանքային օրերի թիվ)}$$

$$W_{\text{ի.տ.}} = (5 \times 0.016 + 40 \times 0.025) \times 728 = 786,24 \text{ մ}^3/\text{շին. ժամ. } 1,08 \text{ մ}^3/\text{օր:}$$

Ընդհանուր ջրի սպառումը շինարարության փուլում՝

$$2304,99 \text{ մ}^3/\text{շին. ժամ:}$$

Կեղտաջրերի հեռացում. շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տեղադրվող սանհանգույցից՝ բիոզուգարանից: Բիոզուգարանի մաքրումը

կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում դպրոցի ջրամատակարարման համակարգը միանալու է Գեղադիր բնակավայրի ջրագծին: Իսկ ջրահեռացման համար նախատեսվում է մաքրման կայանի տեղադրում:

Ջրամատակարարման և կոյուղու հաշվարկային ելքերը կազմվելու են.

- Սառը ջրամատակարարումը կազմվելու է 1,9լ/վրկ,
- տաք ջրամատարարումը՝ 0,8լ/վրկ,
- ներքին հակահրդեհային ջրամատակարարումը՝ 2x2.5 լ/վրկ,
- արտաքին հակահրդեհային ջրամատակարարումը՝ 10. լ/վրկ,
- կոյուղին՝ 3,5լ/վրկ:

Շահագործման փուլում հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՌԻՍԿԵՐԸ

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ, որոնք սակայն կկրեն ժամանակավոր բնույթ: Վերջիններս հիմնականում առնչվում են շինարարական աշխատանքների հետ, հետևաբար իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև: Բացասական ազդեցությունները հնարավոր է կանխել կամ նվազագույնի հասցնել նախանշված մեղմացման միջոցառումների իրականացման արդյունքում:

Նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվում են բնակավայրի տարածքում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները:

4.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- քանդման աշխատանքների,
- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

4.2 Օդային ավազան

Գործունեության իրականացման շինարարության փուլում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ քանդման, տրանսպորտային միջոցների աշխատանքի

ընթացքում՝ ծխագազերի և հողային աշխատանքների (փորման, հարթեցման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Գործունեության իրականացման ընթացքում օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճաժամկետ և թույլատրելի նորմերի սահմաններում:

Շին. Աշխատանքների ընթացքում հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում Կապալառուի կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ, և անհրաժեշտության դեպքում կավելացվի ջրցանի ծավալները:

Աղյուսակ 4.2.1. Շահագործվող տեխնիկայի և շին հրապարակի անկազմակերպ փոշու արտանետումների հաշվարկի արդյունքները

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները	
		գ/վրկ	S/շին. ժամանակահատված: /2080ժամ/
CO (ածխածնի մոնօքսիդ)	36.4	4.2	32.0
CH (ածխաջրածիններ)	0.243	0.028	0.21
NO ₂ (ազոտի օքսիդներ, երկօքսիդի հաշվարկով)	42.3	0.11	8.0
ՊՄ (պինդ մասնիկներ)	4.3	0.5	3.7
Ծծմբային անհիդրիդ		0.006	0.00832
Անկազմակերպ փոշու արտանետում		1.3	1.86

Օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է ժամանակավոր և կարճատև: Շինարարության ընթացքում, հատկապես չոր և շոգ եղանակներին, կատարվելու են շինհրապարակի և ճանապարհի փոշենստեցման աշխատանքներ՝ ջրցան մեքենայով:

Շինարարության փուլում բողոքների դեպքում Կապալառուի կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ՝ նորմերը պահպանելու նպատակով: Հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան միջոցառումներ՝ օդային ավազան արտանետումները կանխարգելելու, մեղմելու նպատակով:

Շահագործման փուլում օդային ավազանի վրա ազդեցությունները լինելու են կաթսայատան աշխատանքի արդյունքում, ինչը կաթսաների արդիականացման

արդյունքում նվազագույնի կհասցվի, համեմատած գոյություն ունեցող կաթսայատան արտանետումների հետ: Կառուցվելու է նոր կաթսայատուն 17.5 քմ մակերեսի վրա:

Տեղադրվելու է 2 հատ կաթսա, յուրաքանչյուրը N=465/423կվտ արտադրողականության: Կաթսաները համալրված են ավտոմատացված կառավարման այրիչներով: Կաթսայատունն աշխատելու է բնական գազով, անհրաժեշտության դեպքում ունենալու է պահեստային՝ դիզլառելիք: Կաթսայատան գազի ծախսը կազմելու է 104,3մ³/ժամ: Կաթսայատան գազամատակարարումը կատարվելու է հողատարածքի անցնող արտաքին ցանցից: Կաթսաների շահագործումից առաջացած վնասակար արտանետումները ներկայացված են ստորև աղյուսակի միջոցով:

Աղյուսակ 4.2.2 Կաթսայատնից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերը

	Կաթսայատուն	
	գ/վրկ	տ/տարի
NO _x	0,07	0,99
CO	0,03	0,43

Պահեստային դիզլառելիքով աշխատելու դեպքում դիզլառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակված «Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման» մեթոդական հրահանգի հիման վրա: Հաշվարկը իրականացվում է ըստ ծախսվող վառելիքի քանակի, տվյալ դեպքում ներկայացվում է դիզելային վառելիքով: Ըստ նշված մեթոդակարգի, ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև աղյուսակում, իսկ հաշվարկը ներկայացված է Հավելվածում:

Աղյուսակ 4.2.3 Դիզ վառելիքից առաջացած արտանետումներ

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO ₂	CH	ՑOU	CO	N ₂ O	CO ₂	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	31,38	4.3

4.3 Աղմուկ և թրթռում

Աղմուկ

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2- III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՀՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1- Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 90 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 70 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում:

Շինարարության հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Աղմուկ առաջացնող մեխանիզմներն աշխատելու են ոչ միաժամանակ, աղմուկը լինելու է ոչ անընդմեջ, այլ կրելու է ժամանակավոր բնույթ: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին, բնակավայրի տրանսպորտի շարժական ակտիվ գոտում, հետևաբար շինհրապարակում աշխատող մեխանիզմների աղմուկը կտարալուծվի ընդհանուր աղմուկի մեջ:

Հաշվարկների հիման վրա կարելի է եզրակացնել, որ բնակելի տարածքի համար 70 դԲԱ թույլատրելի չափի դեպքում շինարարական աշխատանքների աղմուկի առավելագույն մակարդակը (61-64դԲԱ) գտնվում է թույլատրելի նորմայի սահմաններում:

Աղմուկի մակարդակի նվազումը ըստ հեռավորության կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով

$$L_2 = L_1 - 20 \cdot \log_{10}(r_2/r_1)$$

Որտեղ՝

L_1 -ը ձայնի մակարդակն է աղբյուրից r_1 մետր հեռավորության վրա

L_2 -ը վերջնական ձայնի մակարդակն է աղբյուրից r_2 հեռավորության վրա

Աղմուկի ամենաբարձր և հիմանական աղբյուր հանդիսանում է էքսկավատորի աշխատանքը: Որի 1 մետր հեռավորության վրա աղմուկի առավելագույն մակարդակը կազմում է 78 dB:

Կատարվող հաշվարկը աղբյուրից 50 մ հեռավորության համար: Բուն շինարարական աշխատանքների տարածքից 50 մետր հեռավորության վրա է գտնվում բնակելի տուն:

Հաշվարկը կատարվել է վատագույն սցենարաով, ենթադրելով, որ չկա աղմուկը խլացնող որևէ պատնեշ:

$$L_2 = 78 - 20 \cdot \log_{10}(50/1)$$

$$L_2 = 78 - 20 \cdot \log_{10}(50)$$

$$L_2 = 78 - 20 \cdot 1.69897$$

$$L_2 \approx 78 - 33.9794 \approx 44.0206 \text{ dB}$$

Էքսկավատորի աշխատանքից 50 մետր հեռավորության վրա աղմուկի մակարդակը կլինի ոչ ավել քան 44.0206 dB

Հաշվարկներով ստացված արդյունքները չեն հակասում «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ հրամանին:

Հաշվի առնելով աղմուկ առաջացնող շինարարական տեխնիկայի աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Թրթռում

Թրթռման նորմաները բնակելի շենքերում ըստ ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները.

Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց	Թույլատրելի արժեքները XO YO և ZO առանցքներով			
	Թրթռման արագացում		Թրթռման արագություն	
	մ/վրկ ² .10-3	դԲ	մ/վ .10-3	դԲ
2	10	80	0.79	84
4	11	81	0.45	79
8	14	83	0.28	75
16	28	89	0.28	75
31.5	56	95	0.28	75
63	110	101	0.28	75
Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները	10	80	0.28	75
Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մոտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մոտցվում է ուղղում -3դԲ:				

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում այլքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

4.4 Ջրային ռեսուրսներ

Համաձայն «ՀԱՅԸ ԵՎ ՈՐԴԻ ՏԻՏԻԶՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից տրված ինժեներաերկրաբանական եզրակացության՝ գրունտային ջրերը գտնվում են 30մ-

ից խորը հորիզոններում: Գրունտային ջրերի մակարդակից էլնելով նախապես կատարվելու են հիմնահատակների ամրապնդման աշխատանքներ: Շինարարական աշխատանքների ժամանակ աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով: Ջրցանի և տեխնիկական նպատակով ջուրը բերվելու է ջրցան մեքենաներով՝ ըստ պահանջի, պայմանագրային հիմունքներով: Շահագործման փուլում դպրոցի խմելու ջուրը կմատակարարվի Գեղաղիբ բնակավայրի ջրամատակարարման համակարգից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող 1. 5*2. 2մ չափերի 1 բիոզուգարանից: Աշխատանքների ավարտից հետո այն ապամոնտաժվելու է: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Ուստի մակերևութային և գրունտային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները ջրային ռեսուրսներ:

Շահագործման փուլում ջրամատակարարման համակարգը միանալու է համայնքի ջրամատակարարման համակարգին: Գեղաղիբ բնակավայրը կոյուղացված չէ, ուստի դպրոցի շահագործման փուլում տեղադրվելու է 100մ³/օր հզորության ավտոմատացված համակարգով օժտված մաքրման կայան՝ հերմետիկ հոր: Այն ապահովելու է կեղտաջրերի մաքրում մինչև 95%: Հորի կոնստրուկցիան իրականացվելու է B25 դասի անջրթափանց բետոնից: Պատերի արտաքին մակերեսը հիդրոմեկուսացվելու է երկշերտ բիտումային մածիկով: Ունենալու է օդափոխության խողովակ: Կեղտաջրերը հեռացվելու են կոյուղու պոլիէթիլենային բարձր խտության ծալքավոր խողովակներով՝ Ø200մմ: Բոլոր անհրաժեշտ տեղերում նախատեսված են կլոր հատվածքի ե/բ հավաքովի էլեմենտներից դիտահորեր: Տեղադրվելու է ստորգետնյա, ծածկվելու է 150մմ հաստության

ավագային պաշտպանիչ շերտով: Մաքրման արդյունքում առաջանալու է տիղմ, որը նստեցումից հետո վերադառնում է առաջին փուլ: Ավելցուկային տիղմը տեղափոխվելու է աղբավայր՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Պարզեցված ջուրն ինքնահոս հեռացվելու է ավազի շերտերով՝ ֆիլտրվում է: Այն կարելի է օգտագործել ոռոգման նպատակով:

4.5 Հողային ռեսուրսներ

Գործունեության ենթակա տարածքի հողի նպատակային նշանակությունը բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման: Հողածածկը ըստ ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների արդյունքների ներկայացված է ավագակալի, կավավազի լցոնումով, որի հզորությունը միջինում կազմում է 20սմ:

Կառուցապատման ժամանակ կատարվելու է 14826.0մ³ ծավալի հողային աշխատանքներ՝ հանույթ, որից ետ լիցք՝ 7908.0մ³: Ավելացած 6918.0մ³ ծավալով հողային զանգվածն օգտագործվելու է տարածքի հարթեցման համար, քանի որ տարածքում առկա են ռելիեֆի անհարթություններ: Տարածքում առկա ռելիեֆի անհարթությունների հարթեցման համար իրականացվելու է գրունտների լիցք՝ 13279.2մ³ ծավալով, ուստի պակասող 6361.2մ³ (13279.2-6918.0=6361.2) ծավալով հողային զանգվածն է բերվելու է համայնքի կողմից հատկացված վայրից:

Համաձայն կատարված ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների՝ բուն դպրոցի տարածքում հողաբուսական շերտի հզորությունը կազմում է 0.20սմ: Հանման ենթակա բուսահողի ծավալը կազմում է առավելագույնը 897.35մ³, որը ժամանակավոր կուտակվելու է շին. հրապարակում, այնուհետև օգտագործվելու է խախտված տարածքների վերականգնման և բարեկարգման նպատակով:

Հողի բերրի շերտի պահեստավորումը իրականացվելու է շին. հրապարակում՝ առանձնացված վայրում ՀՀ կառավարության 2 նոյեմբերի 2017 թվականի «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի

Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1404 որոշման դրույթների համաձայն:

Հողային ռեսուրսների վրա ազդեցությունները կբացառվեն հաշվետվությունում նախատեսված միջոցառումների կատարմամբ:

Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա ազդեցություններ չեն նախատեսվում:

4.6 Բուսական և կենդանական աշխարհ

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, տարածքը գտնվում է գյուղի միջնամասում:

Կառուցվող դպրոցի տարածքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները՝ հարակից տարածքի ուրբանացված լինելու պատճառով: Տեղանքը բնութագրվում է տարածքի համար բնորոշ ինքնաբերաբար աճող խոտածածկույթով:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է արդեն իսկ դեգրադացված տարածքում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում:

4.7 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Գեղադիր բնակավայրում գոյություն ունեցող մշակութային հուշարձանի, ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքների հետ: Գործունեության ենթակա տարածքում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները:

Ուստի հնարավոր ազդեցություններ վերջիններիս վրա չի կանխատեսվում:

Միաժամանակ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական

աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմինն (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

4.8 Թափոններ.

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- Շինարարական աղբ, ներառյալ քանդման աշխատանքներից առաջացած (ծածկագիր՝ 9120060101004) 17500.0մ³ ծավալով:
- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 5400 կգ/տարի,
- Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» (ծածկագիրը՝ 31401100 08 99 5)՝ 14826.0մ³:
- յուղոտված լաթեր (58200600 01 01 4)՝ 50 կգ/տարի,
- յուղերով աղտոտված ավազ (յուղի պարունակությունը-15%-ից ցածր՝ (ծածկագիրը 31402303 01 03 4)՝ 200 կգ/տարի :
- ներկեր/ Լաքա-ներկանյութերի այլ թափոններ (ծածկագիր՝ 55502900 01 014)՝ 100 կգ/տարի,
- կարծրացված սոսնձի թափոններ (ծածկագիր՝ 55700600 01 01 4)՝ 70 կգ/տարի,
- Կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ՝ (ծածկագիր՝ 35131200 01 99 5)՝ 300 կգ/տարի :
- Կտորների տեսքով ասբեստի թափոններ (ծակագիր՝ 31403702 01 01 4)՝ 500 կգ/տարի,
- Ասբոցեմենտի իրերի ջարդոն /թիթեղ, խողովակ (ծակագիր՝ 31401203 13 014)՝ 200 կգ/տարի,:

Գործունեության ընթացքում առաջացող թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն հրամանների՝ պատկանում են 4 և 5-րդ դասերին:

Որոշ թափոններ (ներկեր, կարծրացված սոսինձ, յուղերով աղտոտված ավազ և այլն) քանակական գնահատումը կկատարվի Կապալառու կազմակերպության կողմից, ելնելով փաստացի արդյունքներից: Թափոնների փաստացի քանակների հաշվառումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 14. 09. 2066թ. N1343-Ն որոշմանապահանջներից ելնելով՝ առաջացող թափոնների փաստացի ծավալների հիման վրա:

Շինարարության փուլում շինարարական աղբը կուտակվելու է համապատասխան անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ, իսկ կենցաղային աղբը՝ 2 հատ աղբահավաք տարողության մեջ:

Առանձնացված թափոնները/մասնավորապես ասբեստյա/ կտեղափոխվեն (կհանձնվեն) համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին լիցենզիայով թույլատրված վայրում տեղադրելու նպատակով:

4.9 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված բնական աղետների, սողանքների, հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի և շահագործվող շինտեխնիկայի վթարների հետ: Համաձայն «ՀԱՅԲ ԵՎ ՈՐԴԻ ՏԻՏԻԶՅԱՆՆԵՐ» ՍՊԸ կողմից տրված ինժեներաերկրաբանական եզրակացության՝ տեղամասը երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների տեսանկյունից պիտանի է կապիտալ շինությունների և բարենպաստ է կառուցապատման համար: Շինարարության ընթացքում արտակարգ իրավիճակներից խուսափելու համար կպապանվեն անվտանգության նորմերը:

4.10 Մարդու առողջություն, աշխատանքի անվտանգություն .

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են աշխատողների արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում հնարավոր վթարների հետ:

Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆԿ-3-480* նորմերի:

Սոցիալական գործոններ.

Շինարարության ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր: Շինարարության փուլում առավելագույն հերթափոխում աշխատելու է 45 մարդ, որից՝ 40 բանվոր, 5-ը տեխնիկական անձնակազմ: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա հերթափոխային գրաֆիկով:

Շինարարության ընթացքում առաջանալու են հարակից տարածքի բնակիչների տեղաշարժի ժամանակավոր անհարմարություններ, որոնք հնարավոր է կանխարգելել կառավարման պլանով նախատեսված միջոցառումների կատարման միջոցով: Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակում կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ կարգի խախտում չի նախատեսվում:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը շինարարության փուլում սոցիալական ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Շինարարության փուլում բացվելու են նոր աշխատատեղեր՝ մոտ 45 մարդու համար: Նոր դպրոցի կառուցումը նպաստելու է համայնքում բնակչության զբաղվածության աճին, նոր ժամանակավոր աշխատատեղերի ստեղծմանը, որոշակիորեն կնպաստի նաև համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

4.11 Բարեկարգում և Կանաչապատում

Շենքի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում, տարածքի բարեկարգում՝ 398.0մ² սալվածքների տեղադրում, ասֆալտապատում և այլն:

Նախատեսվում է կառուցել ռետինե ծածկով խաղաղաշտ, ֆուտբոլի դաշտ և այլն: Տարածքը ցանկապատվելու է 1.3մ բարձրությամբ մետաղական ճաղաշարով՝ 2 հատ դարպասով: Դպրոցի ներտարածքային ճանապարհները նախատեսված են երկշերտ ասֆալտով՝ բազալտե եզրաքարերով: Տեղադրվելու են նստարաններ, ցայտադրյուր, հեծանվային կայանատեղիներ:

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է նաև գործունեության ենթակա ազատ տարածքի՝ 6805.79մ² մակերեսի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ: Կանաչապատման աշխատանքներն աշխատանքներն իրականացվելու են համաձայն Կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման դրույթներով: Կանաչապատման աշխատանքները կատարվելու են ծառատնկման և սիզամարգերի միջոցով՝ համաձայն համայնքապետարանի կողմից համաձայնեցված կանաչապատման նախագծի: Տնկվելու են նոր ծառեր: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ՝ համաձայն համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի (Կանաչապատման նախագիծը ներկայացվել է Գառնիի համայնքապետարանի համաձայնեցմանը):

Կանաչապատման նպատակով օգտագործվող լրացուցիչ բուսահողը անհրաժեշտության դեպքում ձեռք է բերվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պայմանագրային հիմունքներով: Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է նոր խորքային հորից:

5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Նախատեսվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին նախատեսվում է ապահովել, համաձայն բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ): ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

ԲԿՊ-ն, որը ներկայացված է ստորև, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է հիմնական կապալառուի հետ մրցությաին և պայմանագրային փաստաթղթերին:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարական աշխատանքների մասնակիցների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով ՀՏՁՀ-ի կողմից կիրականացվի կանոնավոր մոնիտորինգ, որի շրջանակներում ՀՏՁՀ-ի բնապահպանության մասնագետների կողմից՝ յուրաքանչյուր ենթածրագրի կտրվածքով, կիրականացվեն մոնիտորինգի դաշտային ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (երկու անգամ մեկ ամսվա ընթացքում): Արդյունքները գրանցվելու են մոնիտորինգի ստուգաթերթիկում: ՀՏՁՀ-ի հանձնարարականով տեխնիկական

վերահսկողը պետք է իրականացնի ամենօրյա հսկողություն, որը ներառելու է նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը: Տեխնիկական վերահսկողը պարտավոր է ժամանակին տեղեկացնելու ՀՏԶՀ-ին նկատված անհամապատասխանությունների վերաբերյալ:

Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել փոշու, աղմուկի, ջրի ուրակի և թրթռումների մակարդակի պարամետրերի չափագրումներն իրականացնել այն դեպքերում, եթե բողոքների գրանցամատյանում լինեն ազդակիրների կողմից համապատասխան բնույթի զանգատներ:

ԲՄԱԱ կառավարման պլան

Ծրագրի գործողություններ	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Պատասխանատու մարմին
ՆԱԽԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈԻԼ			
➤ Հասարակական լսումներ, հանրության իրազեկում	✓ Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են Ծրագրի ժամկետների ձգձգման պատճառ դառնալ:	- Իրականացնել դպրոցի կառուցման նախագծի և ԲԿՊ-ի վերաբերյալ առաջին հանրային քննարկում՝ ազդակիր բնակավայրում - Հանրային քննարկումն իրականացնել ՀՀ կառավարության 19 նոյեմբերի 2014 թվականի N 1325-Ն (փոփոխություն 28 դեկտեմբերի 2023 թվականի N 2343-Ն) որոշման դրույթների համաձայն: - Հանրային լսումներում ներկայացնել Բողոքների Մեխանիզմը (ԲՄ), որի ներդրումը կիրականացվի ՀՏԶՀ-ի կողմից:	ՀՏԶՀ
➤ Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում	✓ ԲԿՊ-ի պահանջները անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, որի արդյունքում հնարավոր են բնապահպանական բացասական ազդեցություններ՝ դպրոցի շինարարության և շահագործման փուլերում:	Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև մրցութային և պայմանագրային փաստաթղթերում:	ՀՏԶՀ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԻԼ			
Առողջության և աշխատանքային անվտանգության պլան			
➤ Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները	✓ ԲԿՊ-ի և դպրոցի վերակառուցման ծրագրի բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման: ✓ Աշխատողների, դպրոցի աշխատակիցների և աշակերտների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց ցանկացած հիվանդությունը, վնասվածքը կամ մահը վտանգավոր նյութերի, շին առարկաների ոչ ճիշտ դասավորման և շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումը անընդունելի է և կպահանջի համապատասխան պատժամիջոցների կիրառում:	• Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: • Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. ցուցանակներ, պաստառներ ցանկապատում, պահակակետեր և այլն: • Անհրաժեշտ է բացառել անվտանգության կանոնների խախտման դեպքերը, մասնավորապես չհսկված էլեկտրական գործիքների առկայությունը շինհրապարակում: • Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում: • Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում: • Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անձնական պաշտպանիչ	Կապալառու

		սարքավորումով, ինչպես նաև անհրաժեշտ է նախատեսել լծակներ դրանց կիրառումն ապահովելու համար: • Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել և հաշվետվության ձևով ներկայացնել ՀՏՁՀ-ին: • Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: • Հրահանգավորման իրադարձությունը պատշաճ պետք է գրանցել գրանցամատյանում: • Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը:	
Հանրության հետ կապերի և իրազեկման պլան			
➤ Հանրության իրազեկվածության բարձրացում, բողոքների ներկայացման մեխանիզմ	✓ Ազդեցության ենթակա կողմերի և համայնքների թերի իրազեկվածությունը, տեղեկատվության և փոխըմբռնման պակասը կարող է հանգեցնել դժգոհությունների, որի արդյունքում կարող են տեղի ունենալ Ծրագրի ժամկետների հետաձգումներ:	• Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նախատեսվում է իրականացնել հանդիպում ազդակի անձանց հետ և տեղեկացնել ԲՄ-ի մասին: • Հանդիպման ընթացքում կներկայացվի և կներդրվի ԲՄ-ը՝ համաձայն որի. Ա. Շինարարական հրապարակում՝ դպրոցի տարածքում, անհրաժեշտ է հիմնել հիմնական կամ շարժական գրասենյակ; Բ. Անհրաժեշտ է տեղադրել ցուցանակներ / ցուցապաստառներ, որոնք պարունակում են տեղեկատվություն շինարար կազմակերպության գրասենյակի գտնվելու վայրի, աշխատանքային ժամերի, պատասխանատու անձանց, ինչպես նաև հեռախոսահամարների մասին, էլեկտրոնային հասցեներ այդ թվում ՀՏՁՀ-ի համապատասխան բաժնի հեռախոսահամարներ, էլեկտրոնային հասցեներ: Գ. Գրասենյակում անհրաժեշտ է պահել բողոքների գրանցամատյան; Դ. Անհրաժեշտ է 15 օրվա ընթացքում պատասխանել դիմորդին հարցի լուծման վերաբերյալ:	ՀՏՁՀ Կապալառու
Բնապահպանական կառավարման պլան			
➤ Հողային աշխատանքներ; ➤ Շինանյութերի փոխադրումներ; ➤ Այլ շինարարական աշխատանքներ:	✓ Դպրոցի հարակից տարածքում (մոտ 5-50մ հեռավորության վրա) առկա մասնավոր բնակելի տների, փոքր բիզնեսի կետերի և այլ հանրային կառույցների վրա ազդեցություն. ✓ Տրանսպորտային միջոցների երթևեկությունից, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործուից առաջացած փոշու և այլ արտանետումների ազդեցություն;	Օդի աղտոտման և փոշու կառավարում • Օդի որակի չափազորումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում: • Անհրաժեշտ է իրականացնել պարբերական ջրցանում շինհրապարակից փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով: • Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար;	Կապալառու

		Կառավարության 2005 թ.-ի մարտի 17-ին կայացրած N-293 որոշման մեջ և բացառել կայուն օրգանական աղտոտիչներ՝ POP, պարունակող քիմիական նյութերի գործածությունը: - Անհրաժեշտ է բացառել հատված բուսականության այրումը: Բուսահողի պահպանության կառավարում - Անհրաժեշտ է իրականացնել ազդեցության ենթակա բուսահողի հավաքում և ժամանակավորապես պահում շինհրապարակում բուսահողի համար նախատեսված տեղերում 2մ չգերազանցող կույտերի ձևով՝ հետագայում հողային բարեկարգման/կանաչապատման աշխատանքներում օգտագործել նպատակով: - Անհրաժեշտ է շինաշխատանքների ընթացքում հնարավորինս բացառել տարածքում առկա բուսահողի վրա ազդեցությունները (շինթափոսների և կեղտաջրերի տարածում): Բուսահողի պահպանության կառավարում - Բացառել տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից ու արտադրական տարածքներից դուրս: - Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առանձնացնել տվյալ պահպանվող գոտին: - Անհրաժեշտության դեպքում մշակել գործողությունների պլան հիմնվելով ՀՀ կառավարության "ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" թիվ 781-Ն որաշման դրույթների վրա: - Կենդանական աշխարհի կամ թռչնաշխարհի ներկայացուցիչների հայտնաբերման դեպքում դադարեցնել աշխատանքները տեղյակ պահելով համապատասխան պետական մարմիններին:	Կապալառու
Ենթակառուցվածքների և այլ ազդակների օբյեկտների կառավարման պլան			
- Հողային աշխատանքներ; - Շինարարական աշխատանքներ:	✓ Ենթակառուցվածքների և այլ ազդակի օբյեկտների վրա ազդեցություն:	- Անհրաժեշտ է ձեռնարկել զագային խողովակի պաշտպանիչ գործողություններ դրանց անվտանգությունը ապահովելու նպատակով: - Անհրաժեշտ է իրականացնել խմելու ջրի դիտահորի պահպանման միջոցառումներ; - Անհրաժեշտ է ձեռք բերել համաձայնություն ոռոգման ջրատարարի շահագործումը շինարարության ընթացքում դադարեցնելու համար, ջրատարի հնարավոր խցանումներից, շինհրապարակից հնարավոր արտահոսքերից և այլ ազդեցություններից խոսափելու համար, ինչպես նաև	Կապալառու

		անհրաժեշտ է սահմանել ջրատարի պահպանման միջոցառումներ հնարավոր վնասներից խուսափելու համար:	
Շինարարական հրապարակի կազմակերպման պլան			
➤ Շինհրապարակի կազմակերպում	✓ Շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումից բխող ազդեցություններ:	• Շին հրապարակը անհրաժեշտ է կազմակերպել բացառապես տարածքի ներսում: Բացառել այլ տարածքների օգտագործումը առանց համապատասխան թույլտվության: • Անհրաժեշտ է կազմել շին հրապարակի կազմակերպման սխեման, որում նշված կլինեն շարժական տնակի տեղադրման, շին նյութերի պահեստավորման, բուսահողի ժամանակավոր պահեստավորման, նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն: • Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ցանկապատում, ծրագրի ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում: • Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել բաց հորերի քանակը, հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում և բացառել անիմաստ բաց հորերի առկայությունը շինհրապարակում: • Անհրաժեշտ է ձեռնարկել բաց հորերի տեսանելի կերպով ցանկապատում և անհրաժեշտության դեպքում նախագգուշացնող նշանների տեղադրում: • Շինհրապարակի տարածքը պետք է պահել մաքուր և կարգավորված, պահեստավորման, նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն: • Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ցանկապատում, ծրագրի ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում:	Կապալառու
Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարման պլան			
➤ Շինհրապարակ մուտք ու ելք գործող մեքենաներ	✓ Դպրոցի մոտեցման ճանապարհների վիճակը գնահատվում է լավ:	• Մեքենաների և բեռնատարների երթևեկությունն անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով: • Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը և մոտեցումը անհրաժեշտ է կազմակերպել շին. հրապարակ մուտքի և ելքի համար նախատեսված ճանապարհով: • Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել դպրոցի մոտեցման (ՀՊՏՀ-ի հետ համատեղ օգտագործվող) ճանապարհին հասցրած վնասների վերականգման աշխատանքներ՝ ապահովելով ճանապարհի նախնական վիճակը: • Հնարավորինս խուսափել շինարարության ծանրաբեռնված ժամերին երթևեկելուց,	Կապալառու

		• Անհրաժեշտության դեպքում ձեռք բերել պետ. մարմիններից շին տրանսպորտային միջոցների երթևեկության ուղիների թույլտվություն; • Շին. հրապարակի մուտքերն ու ելքերն անհրաժեշտ է կազմակերպել այնպես, որ նվազագույնա խոչընդոտեն ընդհանուր երթևեկությանը և հասարակական անվտանգությանը; • Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ; • Մեքենաների և սարքավորումների կայանատեղին անհրաժեշտ է կազմակերպել միայն սահմանված վայրերում: • Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը լքելիս: • Անհրաժեշտ է ապահովել, որպեսզի փոխադրամիջոցները սարքավորված լինեն աղմուկի կլանիչներով և խլացուցիչներով: • Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր գնում՝ վառելանյութի և յուղի հոսքը կանխելու համար: • Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և փոխարինել պատշաճ վիճակի մեքենաներով; • Նախքան շինհրապարակից հեռանալն անհրաժեշտ է ապահովել անվադողերը մաքրելու միջոցներով (աշխատանքային տեղամասում կոպչային մակերևույթների և փոխադրամիջոցների լվացման միջոցներ՝ համապատասխան արտահոսքը կանխարգելման համակարգով) շինարարական աղբն ու ցեխի տարածումը կանխելու համար: • Պարբերաբար պետք է ստուգել հարակից ճանապարհների վիճակը պարզելու համար շինհրապարակից տարածվող ցեխի առկայությունը, իսկ տարածման դեպքում անհրաժեշտ է այն մաքրել:	
Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան			
➤ Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակների դեպքեր (դժբախտ պատահարներ և այլն)	✓ Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:	• Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; • Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը; • Անհրաժեշտ է իրականացնել նյութերի անվտանգության տվյալների թերթիկների, արտակարգ իրավիճակների արձագանքման քայլերի մասին տեղեկացնող պաստառների/պլակատների տեղադրումը;	Կապալառու

		- Արտահոսքը մաքրող գործիքները պետք է ճիշտ ձևով պահեստավորել, որպեսզի անհրաժեշտության դեպքում դրանք հեշտությամբ օգտագործվեն, ինչպես նաև աշխատող անձնակազմը պետք է տեղեկացված լինի դրանց ճիշտ գործածության մասին; - Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար; - Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել համապատասխան ՀՀ օրենսդրական պահանջներին; - Քիմիական և այլ վտանգավոր նյութերն ու վառելանյութն պետք է օգտագործել միայն անհրաժեշտության դեպքում: Դրանք անհրաժեշտ է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում, որն ապահովված է անանցանելի/անթափանց հատակով և պատնեշով; - Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը; - Արտակարգ պատահարի դեպքում անմիջապես անհրաժեշտ է տեղեկացնել ՀՏԶ- ին հաշվետվության հատուկ ձևը լրացնելու միջոցով:	
Թափոնների և նյութերի կառավարման պլան			
➤ Շինհրապարակ և շինարարական աշխատանքներ	✓ Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք չեն մաքրվում շինհրապարակից, իրենցից ներկայացնում են պոտենցիալ վտանգ:	- Կանոնավոր կերպով (ամենաուշը 2 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շին. թափոններն ու աղբը՝ փոշու և շին աղբի երկարատև կուտակումը և երթևեկության խոչընդոտները կանխելու համար; - Անհրաժեշտ է դասակարգել աղտոտված հողը, աղբն ու շինարարական մյուս թափոններն ըստ տեսակների և վտանգավորության դասի: - Աղտոտված հողը, անհրաժեշտ է տեղադրել աղբի համար թույլատրված վայրերում: - Շին հրապարակի տարածքում անհրաժեշտ է հատկացնել շին աղբի նախնական կուտակման վայր: - Գենցաղային աղբի հավաքումը և պարբերաբար հեռացումը անհրաժեշտ է իրականացնել թույլատրված աղբավայրում: - Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև տարածքին կից տեղադրված հասարակական աղբամանների օգտագործումը՝ շին թափոնների հեռացման նպատակով:	Կապալառու

Աշխատողների և ղեկավար անձնակազմի դասընթացներ			
➤ Աշխատողների և ղեկավար անձնակազմի վերապատրաստում	✓ Թերի իրազեկվածության և տեղեկատվության պակասից բխող ազդեցություններ:	- Անհրաժեշտ է իրականացնել բոլոր աշխատողների համար ԲԿՊ պահանջների մասին դասընթացներ՝ այդ թվում՝ թափոնների ճիշտ կառավարման, տարածքը մաքուր պահելու և այլն; - Բոլոր աշխատողներին անհրաժեշտ է նաև իրազեկել աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների արարողակարգի մասին;	ՀՏՁՀ Կապալառու
Աշխատանքային տեղամասի վերականգնման և բարեկարգման պլան			
➤ Շինհրապարակի վերականգնում: ➤ Դպրոցի տարածքի բարեկարգում/կանաչապատում	✓ Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շինարարական նյութերը, թափոնները և շին պարագաները:	- Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն; - Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները; - Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը; - Անհրաժեշտ է իրականացնել ՀՏՁՀ-ի կողմից մշակված ընդունման-հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները; - Անհրաժեշտ է կատարել բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների;	Կապալառու
ՀԵՏԵՒԱՐԱՐԱԿԱՆ/ՇԱՀԱԳՈՍՄԱՆ ՓՈԻԼ			
➤ Բնապահպանական աուդիտ		• Իրականացնել հետշինարարական բնապահպանական աուդիտ:	ՀՏՁՀ

Բնապահպանական մոնիտորինգի պլան

Վայրը/ Գործողությունը/ Փուլը	Մոնիտորինգի ենթակա պարամետրեր	Մոնիտորինգի կետեր	Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ	Գործողությունների ցուցանիշ	Պատասխանատու	Մոնիտորինգի հաճախականություն
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԻԼ						
Աշխատանք ունենալու հնարավորություններ:	Աշխատուժը համալրված է տեղացի բնակիչներից:	Շին. հրապարակ:	Փաստաթղթերի ստուգում այդ թվում՝ կապալառուի կողմից աշխատատեղեր՝ նախատեսված տեղաբնակ	Կապալառուի կողմից աշխատանքի ընդունված տեղաբնակ աշխատողների թիվը:	ՀՏՁՀ ՎԽ	Կսահմանվի կապալառուի կողմից աշխատուժի համալրման պլանի մեջ դիտարկել շինարարական գործողությունների մոբիլիզացման փուլում:

			աշխատողների համար:			
Հանրային լսումներ և կապը հանրության հետ:	Հանրության տեղեկացվածությունը շինարարության փուլերի վերաբերյալ Ազդակիր կողմերի տեղեկացվածություն Ծրագրի բողոքներին արձագանքման մեխանիզմի վերաբերյալ	Շին. հրապարակ:	Փաստաթղթերի ստուգումներ, Ստուգայցեր շին տեղամասեր, Հանրային լսումներ, Բողոքների գրանցամատյանի ստուգումներ:	Բողոքներին արձագանքման մեխանիզմն իրականացվել է ՇՄԱԳ-ում նկարագրված բոլոր պահանջվող ընթացակարգերին համապատասխան:	ՀՏԶ	Հանրային լսումները՝ շին աշխատանքները սկսելուց առաջ, ԲԱՄ-ը՝ կանոնավոր ժամանակացույցին համապատասխան:
Տարածքի մաքրում բուսականությունից	Տարածքի մաքրումը բուսականությունից հնարավորինս նվազագույնի է հասցված, Շինհրապարակի մերձակայքի բուսականությունը պաշտպանված է:	Շին. հրապարակ	Տարածքի բուսականությունից մաքրմանը վերաբերվող փաստաթղթերի ստուգում, Շին. հրապարակ ստուգայցեր:	Հատված թփերի գրանցամատյանն առկա է:	ՀՏԶ ՎԽ	Կանոնավոր, ժամանակացույցին համապատասխան:
Շրջակա միջավայրի պահպանություն	Նստվածքների առաջացում, Փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումներ, Աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում:	Շին. հրապարակ Շին. հրա- պարակից 50 մ հեռավորության վրա գտնվող փոշու, աղմուկի, թրթռումների զգայուն ընկալիչներ:	Ակնադիտական ստուգումներ՝ շինհրապարակ ստուգայցերի միջոցով, Բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում, Փոշու, աղմուկի, թրթռումների մակարդակների գործիքային ստուգում և վերլուծություն բողոքների առկայության դեպքում:	Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը, Փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում:	ՀՏԶ ՎԽ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան:

Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր	Շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը, հաստակագիծը և կառավարումը:	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի հարևանությամբ բնակչությանը պատճառված անհարմարություններ:	Փաստաթղթերի ստուգում, Ստուգայցեր շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր:	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրը և հաստակագիծը համապատասխանում են պետ. մարմինների կողմից թույլատրվածին և տարածքի կառավարման պլանին, Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը:	ՀՏՁՀ ՎԽ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան:
Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	Վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր:	Շին. հրապարակ	Փաստաթղթերի ստուգում, Շին հրապարակ կատարած ստուգայցեր:	Պատահարների դեպքում պատահարների հաշվե տվության ձևը լրացված է: Պատահարները կառավարվում են արտակարգ իրավիճակների պլանին համապատասխան:	ՀՏՁՀ ՎԽ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան:
Թափոնների և շին. նյութերի կառավարում	Շին արարական թափոնների և նյութերի կառավարումը շինարարության ընթացքում:	Շին. հրապարակ	Փաստաթղթերի ստուգում, Շին. հրապարակ, թափոնավայրեր կատարած ստուգայցեր:	Շին աղբը, կենցաղային աղբը, ոչ պիտանի և ավելցուկային նյութերի քանակները կառավարվում են Պլանին և հրահանգներին համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում: Թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ	ՀՏՁՀ ՎԽ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան:

Շինհրապարակի վերականգնում, կանաչապատում և տարածքի բարեկարգում	Շին.հրապարակը մաքր- ված է, նյութերը և թափոնները հեռացված են, Բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են, Շին. հրապարակի տարածքը բարեկարգված է:	Տեղամասեր կատարած ստուգայցեր	Շինհրապարակի վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլանն առկա է: Բոլոր մակերեսներն՝ այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական վիճակը:	վարվում է: Ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացված են շինհրապարակից, Թփերի վերատնկման վայրը և քանակը համապատասխանում են նախագծի կանաչապատման պլանին, Ապահովված է թփերի 90% կաջողականությունը:	ՀՏԶՀ ՎԽ	Ժամանակացույցին համապատասխան
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ/ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՓՈԻԼ						
Թերությունների վերացման աշխատանքներ:	Աղմուկի, օդի աղտոտիչների և այլ բնապահպանական ազդեցություններ:	Դպրոցի տարածքի սահմաններում:	Բողոքներ զգայուն ընկալիչների կողմից:	Բողոքների դեպքում՝ աղմուկի և թրթռումների, օդի որակի չափագրումներ ստուգելու համար համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին:	ՀՏԶՀ	
Տարածքի բարեկարգում:	Թփերի և այլ բուսականության նորմալ աճ:	Բարեկարգման բոլոր տեղամասերը:	Ստուգայցեր:	Թփերի և խոտածածկույթի սանիտարական վիճակի ստուգումներ:	ՀՏԶՀ Դպրոցի տօրինություն	

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СП.485.13130.2021:
2. «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 սանիտարական նորմեր:
3. Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզների և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_ Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»:
4. ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»:
5. ՀՀՇՆ II - 7.01-96 «Շինարարական կլիմայաբանություն»:
6. ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին ՇՆԵՎԿ III-IV.2008:
7. ՀՀՇՆ I-2.03-03 «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ քաղաքաշինության նախարարի 2003թ հունիսի 5-ի. 38-Ն հրաման:
8. Քաղաքաշինության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ:
9. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն Քաղաքաշինության նախարարի հրաման (8 ապրիլի 2014):
10. ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2. .8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրաման:
11. ՇՆուԿ 3.01.01-85 (Շինարարության արտադրության կազմակերպում),
12. Երևանի քաղաքի զարգացման, 2019-2023թթ. հնգամյա ծրագրեր:
13. ՀՀ վիճակագրության կոմիտեի պաշտոնական կայք (<https://armstat.am>)
14. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայք (<https://env.am>)


Հավելված 1. Գլխավոր հատակագիծ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1: 500

ՏԵԽՆԻԿԱՏԵԽՆԻԿԱՆ ՑՈՒՏԱՄՈՇՆԵՐ	
1	Փիմնական դառանական մասնաշենք
2	Մարզադաշտ
3	Արևային մարտկոցների կայան
4	Տրանսֆորմատորային ենթակայան
5	Մաքրման կայան
6	Մաքրված ջրի ուղեղիւղաղ
7	Կանաչապատ տարածք
8	Ավտոմեքայադր
9	Մայր




Հավելված 2. Տեղագրական հանույթ



Հավելված 3. Հատված կադաստրային քարտեզից

Կոտայքի մարզ
Համայնք Քառնի գյուղ Քեղաղիք
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 07-022-0013-0037
Մասշտաբ 1: 2000




սպասարկման գրասենյակ

Կ.Տ

Հավելված 4. Հողամասի հատակագիծ

<table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td style="padding: 5px;">Մեկականատեր</td> </tr> <tr> <td style="padding: 5px;"><<ՀՀ Կոտայքի մարզի Գեղարդի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ</td> </tr> </table>	Մեկականատեր	<<ՀՀ Կոտայքի մարզի Գեղարդի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ	ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մարզ Կոտայք, համայնք Գեղարդի գյուղ Գեղարդի 5-րդ փողոց 26 Մարզ, համայնք, հասցե վկայական N 01082017-07-0029 Հողատիրականության կոդ	<table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td style="padding: 5px;">Հաստատում էմ</td> </tr> <tr> <td style="padding: 5px;">Համայնքի ղեկավար</td> </tr> <tr> <td style="padding: 5px;"> Տիգրան Գրիգորյան Ամբիոն, Կոտայքի մարզ, Գեղարդի 2025թ. 04.13 Կ.Տ. </td> </tr> </table>	Հաստատում էմ	Համայնքի ղեկավար	Տիգրան Գրիգորյան Ամբիոն, Կոտայքի մարզ, Գեղարդի 2025թ. 04.13 Կ.Տ.
Մեկականատեր							
<<ՀՀ Կոտայքի մարզի Գեղարդի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ							
Հաստատում էմ							
Համայնքի ղեկավար							
Տիգրան Գրիգորյան Ամբիոն, Կոտայքի մարզ, Գեղարդի 2025թ. 04.13 Կ.Տ.							



<table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td style="padding: 5px;">Մակերես հա</td> <td style="text-align: center;">1.5215</td> </tr> <tr> <td style="padding: 5px;">Ծածկագիր</td> <td style="text-align: center;">07-022-0013-0037</td> </tr> <tr> <td style="padding: 5px;">Նպատակային նշանակություն</td> <td style="text-align: center;">բնակավայրերի</td> </tr> <tr> <td style="padding: 5px;">Գործառնական նշանակություն</td> <td style="text-align: center;">Հասարակական կառուցապատման</td> </tr> <tr> <td colspan="2" style="padding: 5px;"> Լրացուցիչ նշումներ: </td> </tr> </table>	Մակերես հա	1.5215	Ծածկագիր	07-022-0013-0037	Նպատակային նշանակություն	բնակավայրերի	Գործառնական նշանակություն	Հասարակական կառուցապատման	Լրացուցիչ նշումներ:		<table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td colspan="2" style="text-align: center; padding: 5px;">Մասշտաբ 1:2000</td> </tr> <tr> <td style="padding: 5px;">Որակավորում ունեցող անձ</td> <td style="text-align: center;">ԳՄԱՆԵՎԼՆ ՆԱԴՅԱՏՐՅԱՆ</td> </tr> <tr> <td style="padding: 5px;">Որակավորման վկայականի համարը</td> <td style="text-align: center;">03567382</td> </tr> <tr> <td style="padding: 5px;">Ստորագրություն</td> <td style="text-align: center;"><<ԱՐԻՔԻԱՇ>> ՍՊԸ</td> </tr> <tr> <td style="padding: 5px;">Իրավաբանական անձի անվանումը</td> <td style="text-align: center;">«ԱՐԻՔԻԱՇ» ՍՊԸ</td> </tr> <tr> <td style="padding: 5px;">ՀՎԴԴ</td> <td style="text-align: center;">03567382</td> </tr> <tr> <td style="padding: 5px;">Ստորագրություն</td> <td style="text-align: center;">ԱՐԻՔԻԱՇ</td> </tr> <tr> <td style="padding: 5px;">ամիս</td> <td style="text-align: center;">22.05.2025թ.</td> </tr> <tr> <td style="padding: 5px;">ամսաթիվ</td> <td style="text-align: center;">23.05.2025թ.</td> </tr> </table>	Մասշտաբ 1:2000		Որակավորում ունեցող անձ	ԳՄԱՆԵՎԼՆ ՆԱԴՅԱՏՐՅԱՆ	Որակավորման վկայականի համարը	03567382	Ստորագրություն	<<ԱՐԻՔԻԱՇ>> ՍՊԸ	Իրավաբանական անձի անվանումը	«ԱՐԻՔԻԱՇ» ՍՊԸ	ՀՎԴԴ	03567382	Ստորագրություն	ԱՐԻՔԻԱՇ	ամիս	22.05.2025թ.	ամսաթիվ	23.05.2025թ.
Մակերես հա	1.5215																												
Ծածկագիր	07-022-0013-0037																												
Նպատակային նշանակություն	բնակավայրերի																												
Գործառնական նշանակություն	Հասարակական կառուցապատման																												
Լրացուցիչ նշումներ:																													
Մասշտաբ 1:2000																													
Որակավորում ունեցող անձ	ԳՄԱՆԵՎԼՆ ՆԱԴՅԱՏՐՅԱՆ																												
Որակավորման վկայականի համարը	03567382																												
Ստորագրություն	<<ԱՐԻՔԻԱՇ>> ՍՊԸ																												
Իրավաբանական անձի անվանումը	«ԱՐԻՔԻԱՇ» ՍՊԸ																												
ՀՎԴԴ	03567382																												
Ստորագրություն	ԱՐԻՔԻԱՇ																												
ամիս	22.05.2025թ.																												
ամսաթիվ	23.05.2025թ.																												

Հավելված 5. Էլեկտրամատակարարման տեխնիկական պայման



ՆԱԶԱՐԱՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՏԵՐ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԵՆ

ԴՖ, ք. Երևան, 0047, Ա. Արմենակյան 127, հեռ.՝ +374 (10) 65 11 90

№ _____

« _____ » _____ 20 _____ թ.

Ձեռն _____

**ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ Ս. ԲԱՂԻՆՅԱՆԻՆ
Ծանուցման հասցեն՝ Կ. Ուլենցու 31**

Հարգելի պարոն Բաղինյան

Ի պատասխան Ձեր N501/1280 առ 29.04.2025 թվականի գրությանը՝
հայտնում եմ, որ ՀՀ Կուրայքի մարզ, Գառնի համայնք Գեղադիր գյուղ 5-րդ փողոց 26
շենք հասցեում նախատեսվող Գեղադիր միջնակարգ դպրոցի էլ. մատակարարման
համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ գնահատական հայտներն
ենում եմ, որ վերը նշված հասցեում սպառման համակարգի էլեկտրական ցանցին
միացման վճարի չափը հաշվարկվում է համաձայն ՀՀ Հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի 25.12.2019թ. N523-Ն որոշումով հաստատված «ՀՀ
Էլեկտրատեղակայման շուկայի բաշխման ցանցային կանոնների» գլուխ 31-ի 223
կետի և Հավելված N 4-ի հիման վրա:

Դ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՏԾ պետ՝ Կ. Միլոսայեյան

Հավելված 6. Հանրային քննարկման հայտարարություն, արձանագրություն, մասնակիցների ցանկ, նկարներ, համայնքի ավագանու գործունեությանը նախնական համաձայնություն տալու մասին որոշման պատճեն

[illegible]



21 փետրվար, 2025թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքի համայնքապետարան

21 փետրվարի, 2024թ.

Ս/թ. փետրվարի 21-ին՝ ժամը 16:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Գառնիի համայնքապետարանում տեղի ունեցավ <<ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ>> ՍՊԸ-ի կողմից նախատեսվող Կոտայքի մարզի, Գառնի համայնքի, Գեղաղի բնակավայրի կրթահամալիրի կառուցման աշխատանքների վերաբերյալ հանրային քննարկման (1-ին լսումը):

Մասնակցեցին՝

ՀՀ Կոտայքի մարզի Գառնիի համայնքի ղեկավար՝ Տիգրան Պողոսյանը և աշխատակազմի քարտուղար՝ Լիպարիտ Թադևոսյանը, <<ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Էդուարդ Դավթյանը և Արամ Հովհաննիսյանը, ՔՏՀԱ տեսչական մարմնի աշխատակից՝ Արթուր Գրիգորյանը, «Թրիգգեր» բնապահպանական խորհրդատվական ընկերության ներկայացուցիչներ՝ Արթուր Պեպանյանը և Արտյոմ Ղևոնդյանը, Գեղաղի բնակավայրի վարչական ղեկավար Գևորգ Գասպարյանը և բնակիչներ:

Մասնակիցների ցանկը կցվում է:

Ձեկուցումներ

Գառնիի համայնքի աշխատակազմի քարտուղար՝ Լիպարիտ Թադևոսյանը ողջունեց ներկաներին և խոսքը փոխանցեց «ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Արամ Հովհաննիսյան:

Ա.Հովհաննիսյանը ողջունեց ներկաներին և համառոտ ներկայացրեց նախատեսվող կրթահամալիրի կառուցման նախագիծը և խոսքը փոխանցեց «Թրիգգեր» բնապահպանական խորհրդատվական ընկերության ներկայացուցիչ՝ Արթուր Պեպանյանին:

Ա. Պեպանյանը մանրամասն ներկայացրեց ՇՄԱԳ փորձաքննական գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն և հավելեց, որ հարցերի դեպքում սիրով կպատասխանի:

ՔՏՀԱ տեսչական մարմնից՝ Ա. Գրիգորյանը հարցրեց թե դպրոցը թանի բնակավայր է սպասարկում և որոնք են:

Գեղաղիի վարչական ղեկավար՝ Գ. Գասպարյանը պատասխանեց, որ դպրոցը սպասարկելու է Գեղաղի, Հացավան և Ողջաբերդ բնակավայրերը:

Ա. Գրիգորյանը առաջարկեց առանձնակի ուշադրություն դարձնել կրթահամալիրի տարածքի կանաչապատման հատվածին և հակահրդեհային համակարգերին:

Նաև հարց բարձրացրեց թե ինչ ծառատեսակներ են նախատեսվում կրթահամալիրի տարածքում:

Ա. Պեպանյանը պատասխանեց, որ ՇՄԱԳ հաշվետվությունում ծառատեսակները ներկայացված կլինեն ՇՄԱԳ հաշվետվությունում, կրկնորվեն տարածքին հատուկ ծառատեսակներ:

Աշխատակազմի քարտուղար՝ Լ. Թադևոսյանը ցանկացավ ճշտել թե դպրոցի ապաստարանը որքան անձի համար է նախատեսված: Ա.Հովհաննիսյանը պատասխանեց, որ ապաստարանը նախատեսված է 282 անձի համար:

Տիգրան Պողոսյանը եզրափակիչ ելույթով ամփոփեց լսումները և շնորհակալություն հայտնեց ներկաներից մասնակցության համար:

ՀՀ Կոտայքի մարզի Գառնիի համայնքի ղեկավար՝



Տ. Պողոսյան

ՀՀ Կոտայքի մարզի Գեղաղիի վարչական ղեկավար՝




Գ. Գասպարյան

«Թրիգգեր» ՍՊԸ-ի տնօրեն՝



Ա. Պեպանյան



Հավելված 7. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական

 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՑՔԻ ՆՎԱՏՄԱՐ ԻՐԱՎՈՒՆԹՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ  Սույն վկայականով հաստատվում է 18 հունիսի 2025 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՑՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅԻՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ Մարզ Կոտայք, համայնք Գառնի գյուղ Գեղադիր 5-րդ փողոց 26 դպրոց ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ ՀՀ կառավարության որոշում 22.08.1996-269, Համայնքի ղեկավարի որոշում 13.08.2004-5 ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ Կադաստրային ծածկագիր՝ 07-022-0013-0037 Մակերեսի չափը (հա)՝ 1.5215 Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման Գրանցված իրավունքի տեսակը՝ Սեփականություն ՎԿԱՅԱԿԱՆ N 18062025-07-0188, գաղտնաբառ՝ NYITCSAAGPWA Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել հաղապարհի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով Էջ 1/2	5. ԾԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ 1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝ <table border="1" style="width: 100%;"> <thead> <tr> <th>Հ/Հ</th> <th>Կադաստրային ծածկագիր</th> <th>Տեսակ</th> <th>Մակերես</th> <th>Գրանցված իրավունքի տեսակ</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>1</td> <td>07-022-0013-0037-001</td> <td>Դպրոց</td> <td>869.85 քմ</td> <td>Սեփականություն</td> </tr> <tr> <td> </td> <td> </td> <td> </td> <td> </td> <td> </td> </tr> <tr> <td> </td> <td> </td> <td> </td> <td> </td> <td> </td> </tr> <tr> <td> </td> <td> </td> <td> </td> <td> </td> <td> </td> </tr> <tr> <td> </td> <td> </td> <td> </td> <td> </td> <td> </td> </tr> </tbody> </table> Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ձրադեցում պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի գլխավոր ռեգիստր ՎԿԱՅԱԿԱՆ N 18062025-07-0188, գաղտնաբառ՝ NYITCSAAGPWA Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել հաղապարհի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով Էջ 2/2	Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ	1	07-022-0013-0037-001	Դպրոց	869.85 քմ	Սեփականություն																				
Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ																											
1	07-022-0013-0037-001	Դպրոց	869.85 քմ	Սեփականություն																											